Azg
armenian daily
1 ՄԱՐՏ 2003 ՇԱԲԱԹ 39 (2724)

Մոսկվայում սպանվել է եւս մի հայ

Ըստ տեղի մամուլի տվյալների, Ռուսաստանի մայրաքաղաքում գազանաբար սպանվել է 25-ամյա Զորիկ Գայամյանը: Արտառոցն այն է, որ այդ հանցագործությունը տեղի է ունեցել մետրոյի գնացքի վագոնում, ուղեւորների աչքի առաջ մի խումբ գինովցած դեռահասներ հայհոյանքի տարափ են թափել հայ երիտասարդի վրա: Վերջինս պարտքի տակ չի մնացել, եւ խոսակռիվը վերածվել է տուրուդմփոցի: Ունենալով քանակական առավելություն, սպահակները ծեծելով կիսամեռ վիճակի են հասցրել զոհին: Եվ չբավարարվելով դրանով, հարձակվողներից մեկը դանակի 15 հարված է հասցրել նրան, որի հետեւանքով Գայամյանը հենց տեղում վախճանվել է: Միլիցիոներները ձերբակալել են դանակահարողին ու նրան ակտիվորեն աջակցած ընկերոջը:

Հայաստանից ստացվող խռովահույզ լուրերի ֆոնի վրա այս ողբերգությունը խոր հնչեղություն է ստանում: Ցավալի է այն փաստը, որ զանազան խուլիգանների, սկինհեդների, միլիցիոներների համար ավար դարձող բազում հայեր բնավ էլ իրենց կամքով չեն հայտնվել օտար դարձող այս երկրում: Սեփական երկիրը պետք է երկիր դարձնել:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ՍՈՒՄԳԱՅԻԹ-15

Հիշողության կանչով

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

1988 թ. փետրվարի 28-ին սումգայիթյան ողբերգությունը հայության համար հերթական ցնցող հարված էր: 1915-ի Ցեղասպանության այս նոր շարունակությունը դարավերջին հոգեվարքի մեջ գտնվող խորհրդային երկրի հերթական սադրանքի հետեւանքն էր, որ հանգեցրեց դաժանագույն ողբերգության՝ սկիզբ դնելով ազգամիջյան արյունահեղությունների: Կենտրոնական հեռուստատեսության «Վրեմյա» լրատվական ծառայության կեղծ տեղեկատվությունից գրգռված հայության ակտիվ հատվածը 88-ի հանրահավաքների ժամանակ թռուցիկներից էր միայն իրազեկվում սումգայիթյան ողբերգության ճշմարտությունների մասին: Հայաստանի համար ճակատագրական այդ տարեթիվը, որ ազգային զարթոնքի վերելքով նշանավորվեց, ըստ էության, սկսվեց եւ ավարտվեց երկու մեծ ողբերգություններով՝ փետրվարի 28-Սումգայիթ եւ դեկտեմբերի 7-երկրաշարժ: Եվ շարունակությունը՝ անկախության համար մղվող պայքար արցախյան գոյամարտով, որ երկրի ներսում զուգահեռվեց էներգետիկ տեռորով ու տեղական վակուումով: Տարիներն անցել են, բայց վերքը դեռ չի սոսկացել, քանի որ դահիճը շարունակում է զոհ ծեւանալ:

Այսօր մեր երկիրը լարված է, անհամեմատ լարված էր նաեւ 15 տարի առաջ փետրվարի 28-ի սումգայիթյան ողբերգության սահմռկեցուցիչ եղելությունից հետո: Երեկ Երեւանում սումգայիթյան զոհերի հիշատակին նվիրված հանրահավաքը կազմակերպել էին քաղաքատեսարանը եւ Հայաստանի գրողների միությունը: Բազմության երթը սկսվեց Կիեւյան կամրջի սկզբնամասից: Երթին մասնակցում էին մայրաքաղաքի բուհերի հազարավոր ուսանողներ՝ սումգայիթյան ոճրագործությունը դատապարտող բազմաթիվ պաստառներով, իսկ սումգայիթյան զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարի մոտ տեղի ունեցած հանրահավաքի բազմության գլխավերեւում փողփողում էին տարբեր կուսակցությունների բազմագույն դրոշները՝ ՀՈԱԿ, ՀՅԴ, «Արժանապատիվ ապագա», ՀԺԱՄ, «Հզոր հայրենիք» եւ այլն:

Տես էջ 2

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Սումգայիթի զոհերի հիշատակի արարողություն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 28 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքում փետրվարի 28-ին հազարավոր ստեփանակերտցիներ, քաղաքի հյուրեր այցելեցին մայրաքաղաքի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Սումգայիթի զոհերի հիշատակին:

Հուշաքարին ծաղկեպսակներ դրեցին երկրի բարձրագույն ղեկավարությունը, պետական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Տեղի ունեցած միտինգում հանդես եկած ԼՂՀ Աժ նախագահ Օլեգ Եսայանը ընդգծեց. «Այսօր ինքներս պետականորեն դատապարտում ենք 20-րդ դարի մեծագույն ողբերգություններից մեկը՝ խաղաղ բնակիչների սպանդը Ադրբեջանում, որակելով որպես ցեղասպանություն:

Շրջանառության մեջ է դրվել այսպես կոչված Խոջալուի ցեղասպանության խաղաքարտը: Ադրբեջանի իշխանությունները սեփական ժողովրդից շարունակում են թաքցնել դրա հետ կապված ամբողջ ճշմարտությունը, այդ դեպքերի իրական կազմակերպիչներին եւ նպատակները: Վերջապես, Խոջալուն ռազմականացված հենակետ է եղել, որի դեմ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը հակագործողություն են իրականացրել պատերազմական իրավիճակի անհրաժեշտությունից ելնելով, ինչը չես ասի Սումգայիթի պարագայում»:

Միտինգում ելույթ ունեցան սումգայիթյան հրեշագործությունից մազապուրծ մարդիկ:

Սումգայիթի ջարդերը դատապարտող կոչ հրապարակեցին ԼՂՀ քաղաքական ու հասարակական ուժերը: Հանրահավաքի բոլոր մասնակիցների անունից դիմում է հղվել միջազգային իրավասու ատյաններին՝ ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի նախագահներին, այլ կազմակերպությունների, պահանջելով՝ նախքան Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելը, դատավարություն սկսել Սումգայիթում, Բաքվում, Ադրբեջանի մյուս քաղաքներում հայերի դեմ իրականացված ցեղասպանության կազմակերպիչների ու կատարողների նկատմամբ:

Ձենքի գործը կարճված է

Բաքվում հայտարարեց Սերգեյ Իվանովը

ԲԱՔՈՒ, 28 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ինչպես հաղորդում է Բաքվի «525» թերթը, հինգշաբթի բանակցությունների ավարտից հետո մամլո ասուլիսում ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը, ի պատասխան ավելի քան 1 մլրդ դոլար գումարի չափով 1993-1996 թթ. Հայաստանին ռուսական սպառազինությունների անօրինական մատակարարումների հետաքննության ընթացքի վերաբերյալ հարցին, հայտարարել է, որ «այդ գործը փակված է դատախազության կողմից հանցակազմի բացակայությունը նկատի առնելով»:

Ռոբերտ Քոչարյանը շարունակում է այցելությունները նախընտրական շտաբներ

Շարունակելով նախընտրական հանդիպումները ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանը փետրվարի 28-ին այցելել է մայրաքաղաքի Դավիթաշեն, Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն եւ Ավան համայնքների նախընտրական շտաբներ, որտեղ հանդիպել է շտաբների ու ենթաշտաբների ներկայացուցիչների հետ, տեղեկացնում է Ռ. Քոչարյանի նախընտրական կենտրոնական շտաբից մեր ստացած հաղորդագրությունը: Շնորհակալություն հայտնելով առաջին փուլի համատեղ աշխատանքի համար, նախագահի թեկնածուն համոզմունք է հայտնել, որ երկրորդ փուլի ընթացքում եւս իր թիմակիցները կծավալեն եռանդուն գործունեություն, որի շնորհիվ կաղաքակրթված կազմակերպված, ազատ ու թափանցիկ ընտրություններ:

Հանդիպումների ընթացքում ընդգծվել են ՀՀ նախագահի ընտրության երկրորդ փուլին առնչվող ընթացիկ հարցեր:

Իրանն այսօրվանից կսկսի ոչնչացնել իր «Ալ Սամուդ» հրթիռները

ՄԱԿ-ի տեսչական խմբի ղեկավար Հանս Բլիքսը, երեկ ժամանելով կազմակերպության Նյու Յորքի կենտրոնակայան, գոհունակությամբ հայտարարեց, որ իրաքյան կողմից նամակ է ստացել, որ «Ալ Սամուդ» տեսակի հրթիռների ոչնչացումը կսկսվի այսօրվանից: Հանս Բլիքսը Բաղդադի այս որոշումը որակեց «նշանակալից քայլ», որը պետք է շարունակվի Իրաքի ամբողջական զինաթափմամբ: Այնուհանդերձ, ամերիկյան կողմը, ինչպես միշտ, այդ քայլը համարեց «թոզ փչոց», մինչդեռ Ֆրանսիայի արտգործնախարարի կարծիքով, դա աղացույց է այն արդյունավետ աշխատանքի, որ տանում է ՄԱԿ-ի տեսչական խումբն Իրաքում, հետեւաբար այդ խմբին պետք է առիթ տալ ամբողջացնել իր առաքելությունը: Համենայն դեպս, մասնագետների կարծիքով՝ «Ալ Սամուդ» հրթիռները հնացած եւ խիստ նախնական զենքեր են, օժտված խիստ անկատար հեռակառավարման սարքերով: Բաղդադի կողմից դրանց ոչնչացումն ավելի բարոյական նշանակություն ունի, քան ռազմական: BBC-ի մեկնաբաններից մեկի բնորոշմամբ, Բաղդադի այս քայլը նման է մենամարտի դուրս եկած մարդու, որ զենքը հանձնում է, բայց ստանում է հակառակորդի պատասխանը՝ «բոլոր դեպքերում քեզ սպանելու եմ»:

Կարաչիում հարձակում ԱՄՆ հյուպատոսության դեմ

ԿԱՐԱՉԻ, 28 ՓԵՏՐՎԱՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ճշված տեղեկատվությամբ, Կարաչիում (Պակիստան) Միացյալ Նահանգների հյուպատոսության վրա կատարված հարձակման հետեւանքով սպանվել են երկու տեղացի ոստիկաններ: Պակիստանի օրենքի եւս երեք պահապաններ վիրավորվել են: Ահաբեկիչները ծողոտրել են, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Ջորջ Բուշ. Պատերազմը գործնականորեն անխուսափելի է

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 28 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ամերիկյան հայտնի «Յու էս էյ թուդեյ» թերթն ուրբաթ օրը հարցազրույց է հրապարակել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ, որտեղ Սպիտակ տան ղեկավարը հայտնել է, որ իր կարծիքով ամերիկացիները «լրիվ հասկանում են», որ պատերազմն Իրաքի հետ շուտով կարող է սկսվել: «Իմ վերաբերմունքը Սադդամ Հուսեյնի նկատմամբ հանգում է նրան, որ եթե նա մտադիր լիներ զինաթափվելու, ապա արդեն կզինաթափվեր»,- հայտնել է Բուշը՝ ավելացնելով, որ «հիմա մենք նրան զինաթափ կանենք»: «Ես երկար եւ խոր մտածել եմ հետեւանքների եւ այն գնի մասին, որ հարկ կլինի վճարել»,- ասել է Սպիտակ տան ղեկավարը, ըստ որի Իրաքը սպառնալիք է ներկայացնում ԱՄՆ-ին, եւ ինքը չի կասենում, որ ապագայում ամերիկացիները հարց տան. «Որտե՞ղ էր նախագահ Բուշը: Ինչո՞ւ նա չսկսեց գործել հանուն ամերիկյան ժողովրդի անվտանգության»: «Յու էս էյ թուդեյ»-ը հաղորդում է նաեւ, որ հարցազրույցում Բուշը հասկացրել է,

որ իրեն դիչ են անհանգստացնում ՄԱԿ-ում տեղի ունեցող բանավեճերը, վետոյի հեռանկարն այն բանաձեւի առնչությամբ, որը պատերազմի ճանապարհ է բացում, կամ մի շարք դաշնակիցների ընդդիմախոսությունը երկրորդ բանաձեւի ընդունմանը հասնելու փորձը «մեր խոսքն է մեր դաշնակիցներին եւ բարեկամներին», հայտնել է Բուշը, ըստ որի, անկախ բանավեճերի արդյունքներից «Սադդամը պետք է զինաթափվի»:

ԸՆԹԱՑԻԿ

Հայ մարդու տանը երեխա է ծնվել: Արու զավակ: Մի՞թե սրանից առավել մեծ ուրախություն է լինում: Չէ, չի լինում, համոզված են Մեծամոր քաղաքի 2-րդ շենքի թիվ 33 բնակարանի տանտերերը՝ Արյոն Համբարձումյանը եւ Մարինե Հովհաննիսյանը: Այսպես է մտածում Արյոնի հորեղբայրը՝ Համբարձումյան գերդաստանի այսօրվա ավագը՝ Համբարձումը:

- Մեր տոհմը միշտ էլ հպարտացել է իր զավակներով,- ասում է Համբարձումը՝ բարձում հեռին ու դաստում Համբարձումյանի տոհմի ամենափոքրիկի՝ Նարեկի ծննդյան օրվա դաստությունը:

Փետրվարի 19-ին՝ ՀՀ նախագահական ընտրությունների օրը, տան հարսը՝ Մարինեն ամուսնուն խնդրեց միասին գնալ ընտրատեղամաս: Չէ՞ որ առաջին անգամ էր ընտրում: Եվ որպես ռամկավար նա իր ձայնը, բնականաբար, տվեց գործող նախագահին: Ու ընտրություններից երկու ժամ հետո շտաբագնության մեքենան նրան տարավ ծննդատուն:

- Գիտե՞ք, հետաքրքրական զուգադիպությամբ մի քանի ամիս առաջ Մարինեն ընդունվել էր Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության շարքերը,- ասում է ամուսինը:

Ինքը՝ Արյոնը նույնպես ցանկություն ունի համալրելու ՀՌԱԿ-ի շարքերը: Այս անգամ արդեն ինքն է դիմել:

Երեկ Մեծամոր քաղաքի շատ ու շատ բնակիչներ ականատես եղան հետաքրքրական մի այցելության: Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, ՀՌԱԿ փոխատենապետ Հրաչ Կարապետյանը, «Մեծամոր» ակումբի ատենապետ Արտեմ Եղիշյանը ծաղիկներով, նվերներով եղան Համբարձումյանների օջախում:

Իսկապես հաճելի անակնկալ էր այս այցը:

- Չէի սպասում, որ իմ կուսակցության առաջնորդն այս օրը կայցելի մեզ,- հուզված ասում է Մարինեն՝ երիտասարդ մայրը: - Անշուշտ, մեզ համար անչափ կարեւոր իրադարձություն է մեր անդրանիկ զավակի ծնունդը, բայց որ այն պետք է կարեւոր լիներ մի մեծ կուսակցության առաջնորդի, կուսակցության ղեկավարների համար... Խորին շնորհակալություն:

Բարձրահարկ շենքի մոտ հավաքված մարդկանց համար նույնպես անակնկալ էր այս այցը: «Մենք սովորել ենք, որ այս օրերին զուտ քաղաքական ու կուսակցական հավաքներ են լինում: Բայց որ մայրաքաղաքից պետք է գան նորածին երեխայի ծնունդը շնորհավորելո՞ւ...»:

- Մեր այցի առիթով ոչ մի արտառոց բան չեմ տեսնում, - մեր զրույցի ժամանակ ասաց Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը: - Ես ուրախ եմ, որ եւս մեկ հայ ընտանիքում արու զավակ է ծնվել, առավել եւս, եթե այդ ընտանիքի տանտիրուհին մեր կուսակցությունից է, իսկ ամուսինը ցանկանում է ընդունվել: Թող Աստված պահի այս հայ երեխային եւս:

ՀՌԱԿ ատենապետը երիտասարդ մորը ծաղիկներ ու նվերներ հանձնեց: Նարեկի ծնողները ոգեւորվել էին քաղաքական գործչի ամենասովորական մարդկային այս քայլից ու խնդրեցին պարոն Միրզախանյանին դառնալ Նարեկի կնքահայրը:

Մեծամորցիներից շատերը, Արյոնի եւ Մարինեի հարեւաններն ասացին. «Ահա, սա է իսկական աշխատանքը, այսպես են աշխատում: Թե չէ՝ կանգնում են հրապարակներում ու ճառեր ասո՞ւմ....»:

Տխուր, ազնիվ քայլ էր ՀՌԱԿ ղեկավարության այս այցը, կարեւոր քայլ: Թող օրինվի այն տունը, ուր հայ զավակ է ծնվում, ու օրինվի երեխայի ծնունդին եկած ոստը:

ՍԵՐԳԵՅ ՂԱԼՈՅԱՆ

ՄԵԾԱՄՈՐ

Թող օրինվի այս ծնունդը եւս

ՄՍՏԱՍՈՒՐ

Կուսակցությունը շարունակում է համալրվել

Եկա երկու ՀՌԱԿ ակումբներ

Երեկ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության երկու նոր ակումբ հիմնվեց Գեղարքունիքի մարզի Նորաշեն եւ Արագածոտնի Կարբի գյուղերում:

Նորաշենի նորագիրներին ռամկավարական մեծ ընտանիքի մաս կազմելու համար ողջունեցին ՀՌԱԿ փոխատենապետ Մեխակ Գեւորգյանը, Հանրապետական վարչության անդամ Գայանե Մուրադյանը: Նորաշեն էին մեկնել նաեւ «Սեւան» ակումբի ատենապետ Նորայր Խալաֆյանն ու փոխատենապետ Հովհաննես Ղուկասյանը: Կուսակցության փոխատենապետի կնքահայրությամբ 9 նորաշենցիներ ռամկավար դարձան: Իսկ քննարկվող հարցերը տարբեր էին. երկրի համար բախտորոշ այս ժամանակահատվածում, անշուշտ, նախագահական ընտրությունները եւս հնարավոր չէր շրջանցել: Իսկ այս հարցին նորաշենցիները մոտենում են առաջին հերթին իրենց գյուղի խնդիրների տեսանկյունից: Նախագահի թեկնածուներից ո՞վ կարող է քայլեր ձեռնարկել, որ գյուղացու վաղվա օրն այդքան հոգսաբաս չլինի: Բնակլիմայական դժվար պայմաններում ապրող քարքարոտ հող ունեցող Նորաշենը հիմնականում անասնապահության հույսին է, իսկ արտադրված մթերքն իրացնել է պետք: Ինչպե՞ս: Գյուղացին այս հարցի լուծումը պատկերացնում է. «Վերամշակման արտադրամասեր լինեն, հոգսից ազատվենք», ասում են նրանք: Ու, թեեւ երկրի վերջին տարիներին ունեցած զարգացումը նրանց համար տեսանելի է, գյուղացին անհամբեր է: Տեսնելով տնտեսական առաջընթացը, աղեցի գոտու վերականգնումը, հարցնում է. «Ե՞րբ է մեր բնակավայրի հերթը գալու»: Մեխակ Գեւորգյանի խոսքով, երկիրն արդեն բռնել է զարգացման ճանապարհը: Կամաց-կամաց, բայց գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդեգրած քաղաքականության շնորհիվ, անշուշտ, ոչ հեռավոր ապագայում արդյունքներն ավելի շոշափելի կլինեն: Իսկ հեղափոխական կոչերով առաջ չես գնա, մի քանի տարին մեկ երկրի նախագահ փոխելն օգուտ չի տա, մանավանդ որ երկրի կայունությունն ու առաջընթացի առաջին քայլերը վտանգավոր անորոշությամբ փոխելը մեզ ձեռնտու չէ:



Փետրվարի 19-ի ընտրություններին Ռոբերտ Քոչարյանը ստացել է Նորաշենի ընտրողների 48 տոկոսի վստահության քվե: Գործող նախագահի օգտին քվեարկած նորաշենցիներից մեկը փորձում էր հիմնավորել իր ընտրությունը. գյուղի մեծագույն խնդիրներից էլ գազիֆիկացման հարցն է, եւ դատելով հանրապետությունը գազիֆիկացնելու Քոչարյանի սկսած ծրագրից, Նորաշենի հերթն էլ է գալու: Իսկ գործող նախագահն իր անցած ճանապարհով ապացուցել է, որ ասած խոսքը միշտ գործի է վերածում:

Ռամկավարների հետ հանդիպմանը մասնակից էին ոչ միայն նորագիրները, այլեւ գյուղի բնակիչները, փոխգյուղապետ Անդրանիկ Ավագյանը: Նրա խոսքով, շատ կուսակցությունների ներկայացուցիչներ են եկել, բայց երբեւէ նման անկեղծ եւ անմիջական զրույց չէր եղել: Առիթն օգտագործելով, Անդրանիկ Ավագյանն իր հարգանքն արտահայտեց ավանդական կուսակցության նկատմամբ: Այլ կուսակցությունների ղեկավարները, պատշաճ չունենալու դեպքում միանգամից այլ՝ ղեկավարող կուսակցություններին են հարում: Ռամկավարներն իրենց ամբողջ պատմության ընթացքում միասնական եւ հայրենանվեր են եղել անկախ նրանից, թե կուսակցության ղեկավար դիրքո՞ւմ են եղել, թե՞ ոչ:

Այսուհանդերձ, նորագիրներից աշխարհագրության ուսուցչուհի Սեդա Հովհաննիսյանը եւս, ինչպես փետրվարի 19-ին, մարտի 5-ին էլ Ռոբերտ Քոչարյանի օգտին է քվեարկելու: Նախ, Արշակ Սադոյանի նախորդ օրվա ելույթում հնչած այն խոսքերից, թե Քոչարյանին միայն դարաբաղցիներն ու բաքվեցիներն են ընտրում, տիկին Սեդան շատ էր վրդովվել: «Սադոյանն ինչո՞ւ է իրավունք վերապահում իրեն, օրինակ իմ՝ ծագումով սեւանցուս անունից խոսել», նշում էր կինը: Իսկ Քոչարյանին սատարելու համոզմունքն այսպես է հիմնավորում. «Դարաբաղն ինձ համար շատ թանկ է նաեւ նրա համար, որ պատերազմում հարազատներիս արյունն է թափվել: Մենք պարտավոր ենք Դարաբաղը պահել, իսկ Դարաբաղը պահողներին գլխավորում է Ռոբերտ Քոչարյանը»:

Մ. Հ.

ՍՈՒՄԳԱՅԻԹ-15

Հիշողության կանչով

Սկիզբը էջ 1

Սգո հանրահավաքին բացման խոսքով ելույթ ունեցավ Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը: Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանն իր ցավակցությունը բերեց 15 տարի առաջ գազանաբար խոշտանգված մեր հայրենակիցների հարազատներին: Նահատակների հիշատակի համար հոգեհանգստյան պատարագ կատարեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը:

Սումգայիթյան ոճրագործությունը՝ իբրեւ 1915-ի Ցեղասպանության շարունակություն, դատապարտելու կոչով հանդես եկան ՀՅՄ նախագահ Լեւոն Անանյանը, Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը, ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի անդամ Լարիսա Ալավերդյանը: Իրենց ելույթներում հանրահավաքի բանախոսներն աշխարհին դիմելու կոչով հանդես եկան, գտնելով, որ եթե դատապարտվեր 1915-ի եղեռնը, կկանխվեր նրա շարունակությունը ոչ միայն մեզանում, այլեւ ընդհանրապես աշխարհի յուրաքանչյուր հորիզոնականում: «Մենք սպառել ենք լռության մեր լիմիտը, մենք պատասխանատու ենք ապագա սերունդների առաջ, տեր պիտի կանգնենք մեր անցյալին եւ արժեքներին: Չի կարող առաջ շարժվել այն ազգը, որ պատմությունից դասեր չի քաղում»:

Լարիսա Ալավերդյանն իր խոսքն ուղղեկոչման այս արարողությունն անհրաժեշտ փաստ է, հատկապես երբ ադրբեջանցիները ոգեւորվել են՝ հայերին մեղադրելով Խոջալուի դեպքերի կազմակերպման մեջ: Դիմելով Ազգային ժողովին, որն Բարսեղյանն ասաց, որ ժամանակն է փետրվարի 28-ը Ադրբեջանի տարածքում հայոց ցեղասպանության օր հռչակելու:

Հանրահավաքին ընթերցվեց Սիլվա Կապուտիկյանի ուղերձը: Ժողովրդին 1988-ի միաբանության ոգի մաղթելով, բանաստեղծուհին կոչ էր անում միջազգային հանրությանը լսելի դարձնել մեր կոտորածների, ադրբեջանական նորոյտ եղեռնագործությունների մասին: Սումգայիթյան ցեղասպանությունը վերապրող Հրանտ Ադամյանն ականատեսի վկայությամբ 15 տարի առաջ կատարված ոճրագործություններից մի քանի սարսռազդեցիկ պատկերներ ներկայացրեց:

Հանրահավաքն ավարտվեց Զորի Բալայանի բոցաշունչ ելույթով. «Չմոռանանք մեր նահատակներին եւ նկատի ունենանք, որ ադրբեջանցիներն անում են ամեն ինչ, որ աղ ցանեն մեր վերքերին, որ այս աղմուկի մեջ Դարաբաղի հարցն ի նպաստ իրենց լուծեն», ապա ընթերցեց ՀՅՄ-ի եւ քաղաքապետարանի հետ ստեղծված մշտական հանձնաժողովի ընդունած բանաձեւի նախագիծը՝ ուղղված ՄԱԿ-ին, Եվրախորհրդարանին, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի նախագահներին, Մինսկի խմբի համանախագահողներին՝ սումգայիթյան հրեշավոր ոճրագործության դատապարտմամբ եւ մինչեւ Դարաբաղի հարցի լուծումը ոճրագործների դեմ բաց դատաստան տեսնելու առաջարկությամբ:

Հանրահավաքի մասնակիցներն անցան Ցիծեռնակաբերդի հուշահամալիրով՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով 1915 թ.-ի զոհերի հիշատակին, իսկ ճանապարհին ոմանք թեքվում էին՝ խոնարհվելու նաեւ արցախյան ազատամարտում զոհվածների՝ Մովսես Գորգիսյանի, Երվանդ Սաղումյանի եւ մյուսների շիրիմներին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տոյգիր մամուլի միջոցով կամ օսդիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Ըստ տեղական ՀԿ-ների՝ կազմակերպված, հանգիստ, բաց, թափանցիկ

«Նախագահական ընտրությունների քարոզարշավը հիմնականում ընթացել է օրենքի սահմաններում, քվեարկության ամբողջ գործընթացը բաց էր եւ թափանցիկ», երեկ Ժուռնալիստների տանը կայացած ասուլիսի ժամանակ նման հայտարարությամբ հանդես եկան փետրվարի 19-ի ընտրությունների ընթացքում համատեղ դիտորդական առաքելություն իրականացրած տեղական կազմակերպություններ: Դրանք էին «Արդարություն եւ իրավունք», «Քաղաքացիական, իրավագիտական եւ տնտեսագիտական հետազոտությունների ու կանխատեսումների կենտրոն», «Երիտասարդների իրավական եւ սոցիալական աջակցության կենտրոն», «Հայկական համաշխարհային միություն», «Հանուն ժողովրդավարության», «Եվրոպական հետազոտությունների հայկական կենտրոն» եւ «Եվրոպական իրավունքի հայկական ընկերակցություն» հասարակական կազմակերպությունները:

Վերջիններից 5-ի ներկայացուցիչներն ասուլիսի ժամանակ նշեցին, որ մոտ 1000 դիտորդներ են իրենց կողմից հետեւել ընտրական գործընթացներին հանրապետության ողջ տարածքում:

Այս դիտորդական առաքելության կողմից որպես հիմնական դիտողություն նշվեցին ընտրացուցակային անճշտությունները, որոնք, ճիշտ է, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակվանից ավելի հիշ են, բայց մտահոգության տեղիք են տալիս: Խախտումները վերաբերել են նաեւ գյուղական բնակավայրերում տեղամասերի շուրջ խմբվելուն:

Ընդհանուր առմամբ, դիտորդների աշխատանքի հետ կապված խնդիրներ չեն եղել, եղել են մասնավոր բերություններ, ասենք, կապված վստահված անձանց կողմից օրենքի չիմացության հետ: Որպես վերջինի հետեւանք եղել են դեպքեր, երբ վստահված անձը փորձել է անհիմն աղմուկ բարձրացնել:

Չեն նկատվել մարդկանց համոզելով ընտրությունների տանելու դեպքեր, իսկ այն տեղամասերում, որտեղ քվեարկել են զինվորականներ, վերը նշված կազմակերպությունների դիտորդները չեն նկատել պարտադրելու փաստեր: Զինծառայողներից էլ տեղեկացել են, որ ոչ ոք նրանց չի պարտադրել ընտրել այս կամ այն թեկնածուին:

Նշվեց նաեւ այս ընտրությունների ժամանակ անուշադիր վերաբերմունքն այն հաշմանդամների նկատմամբ, որոնք շարժվելու հնարավորություն չունեն եւ չեն կարող հասնել տեղամասեր:

Համաձայն հայտարարության, նախագահական ընտրությունները ընթացել են հանգիստ մթնոլորտում եւ կազմակերպված, ընտրական հանձնաժողովների անդամները բավարար մակարդակով տիրապետել են ընտրական օրենսդրությանը եւ ընտրողների կամքի ազատ արտահայտման նկատմամբ բռնության կամ սպառնալիքի էական դեպքեր չեն արձանագրվել:

Ընտրական բոլոր գործընթացները վերահսկելի են եղել դիտորդների եւ վստահված անձանց համար, այլոց փոխարեն քվեարկելու նկատված դեպքերը կանխվել են:

Որպես նախնական եզրակացություն, նշված ՀԿ-ները հայտարարեցին, որ ընտրություններն իրականացվել են կազմակերպված, թափանցիկ, առանց ընտրակարգի, վստահված անձանց եւ դիտորդների իրավունքների էական խախտումների, որոնք չէին կարող էական ազդեցություն ունենալ ընտրությունների եւ քվեարկության արդյունքի վրա:

Հայտարարության նման ուշացումը ՀԿ-ների ներկայացուցիչները բացատրեցին նրանով, որ իրենց չի ֆինանսավորում որեւէ միջազգային կազմակերպություն, եւ մասնավորապես այդ պատճառով մարզերից տվյալները ստացվել են բավականին ուշ:

Ա. Հ.

Վազգեն Մանուկյանը պատասխանում է Ստեփան Դեմիրճյանի քաղաքական հայտարարությանը

«Պայքարը պիտի շարունակել մինչեւ վերջ»

Երեկ հրավիրած մամլո ասուլիսում Վազգեն Մանուկյանը Ռոբերտ Քոչարյանի եւ Ստեփան Դեմիրճյանի կերպարների համեմատական վերլուծություն արեց՝ պնդելով, թե նաեւ ի դեմս իրեն երկրորդի ճամբարում կան փորձառու մարդիկ, որոնք գործող նախագահից ոչ պակաս ներդրում ունեն մեր երկրում: Դա, ըստ ԱԺՄ առաջնորդի, վերաբերում է ինչպես ԼՂ խնդրին, այնպես էլ մեր արտաքին քաղաքականությանը, տնտեսությանը:

Այս պահին, Վ. Մանուկյանի համոզմամբ, ընդդիմության առաջնորդը պիտի հանդես գա քաղաքական հայտարարությամբ՝ ներկայացնելով, իր ընտրվելու դեպքում, առաջիկա առնվազն երկու տարիների անելիքները, բերելով խորհրդարանական ընտրությունների ազատ եւ արդար անցկացման երաշխիքներ:

Այս հայտարարությունից զատ Ստեփան Դեմիրճյանին սատարող ուժերը սպասում են նրա որոշմանը՝ ընտրությունների երկրորդ փուլին մասնակցելու վերաբերյալ:

Որոշման առաջին տարբերակի դեպքում, ըստ ԱԺՄ նախագահի, Ստեփան Դեմիրճյանը չի մասնակցի մարտի 5-ի ընտրություններին: «Ռոբերտ Քոչարյանը կմնա մենակ եւ կդառնա ձեւական ու թույլ նախագահ՝ ե՛ւ ներքին, ե՛ւ արտաքին ընկալման առումով»: Երկրորդ փուլից երկու թեկնածուներից մեկի հրաժարվելու դեպքում ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն ընտրաթղթերում մնացած թեկնածուի հետ պիտի մրցի առաջին փուլում երրորդ տեղը գրաված թեկնածուն, այս դեպքում՝ Արտաշես Գեղամյանը:

Նա արդեն դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ բողոքարկելու առաջին փուլի արդյունքները, այսպիսով, այս պահին բացառելով իր մասնակցությունը երկրորդ փուլին:

Երկրորդ տարբերակի դեպքում Ստեփան Դեմիրճյանը կհամաձայնի շարունակել ընտրաթղթերը: «Այս պարագայում անթույլատրելի պիտի կայանա Ռոբերտ Քոչարյան-Ստեփան Դեմիրճյան հեռուստաբանավեճ: Կարծում եմ, նման բանավեճում Ս. Դեմիրճյանը ջախջախիչ հաղթանակ կտանի», վստահ է Վ. Մանուկյանը:

«Այս տարբերակներից ո՞րը կնախընտրեր ինքը՝ պրն Մանուկյանը» հարցին վերջինս պատասխանեց, թե նպատակահարմար է համարում գնալ ընտրությունների եւ փորձել հաղթել: «Որքան էլ մեծ լինեն կեղծիքները, կարծում եմ, հաղթանակի հնարավորություն Ս. Դեմիրճյանն ունի»:

Եթե, այնուամենայնիվ, Ս. Դեմիրճյանը չմասնակցի՞ մարտի 5-ի ընտրություններին, կամ Ռ. Քոչարյանը հաղթի՞: «Պայքարը պիտի շարունակել մինչեւ վերջ: Ի վերջո, այս երկրում պիտի՞ պաշտպանված լինեն մարդկանց իրավունքները: Բայց մեծ բախումներից, ցնցումներից, միեւնույն է, պիտի խուսափել»:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

«Ինտերնյուսն» իր հատուկ կարծիքն ունի Հայաստանի ՁԼՄ-ների դիրքորոշման վերաբերյալ

Երեկ «Ինտերնյուսի» տնօրեն Վիլյամ Կանտերը եւ «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության պատասխանատու Նունե Սարգսյանը ներկայացրին իրենց հայտարարությունն ու դիտումը, ուր, ըստ իրենց մասնավոր կարծիքի, «հայաստանյան ՁԼՄ-ները, մասնավորապես հեռարձակվողները, ցավոք, չհաղթահարեցին 2003 թ. փետրվարյան փորձությունը: Մենք չենք հետեւում լրագրողական սկզբունքներին եւ բարոյական նորմերին, մենք չենք հետեւում անգամ բիզնեսի օրենքներին եւ կախվածության մեջ ենք մնում ուժից ասես, բացի մեր լսարանից»: Բազմաթիվ «մեղադրանքներ» ընդգծելով, տկն Սարգսյանը գտնում է, որ մենք արժեզրկում ենք լրագրողի մասնագիտությունը եւ կամաց-կամաց կորցնում այնքան դժվարությամբ նվաճած խոսքի ազատությունը: Հենց այս խնդրով, ինչպես նշված է դիտումում, «Ինտերնյուսը» խիստ անհանգստացած է եւ պատրաստ է հնարավոր օգնություն ցուցաբերել, քանի որ գտնում է, որ նրանք նույնպես պատասխանատու են ՁԼՄ-ներում տիրող իրավիճակի համար, կոչ են անում նախընտրական քարոզարշավի այս վերջին օրերին զինվել համարձակությամբ եւ անկողմնակալությամբ ու հիշել հասարակության առջեւ իրենց ունեցած պատասխանատվության մասին: Պրն Կանտերի կարծիքով, լրատվամիջոցներն ու շահագրգիռ անձինք չեն իրականացրել իրենց գործը, եւ մտավախություն ունի, որ խիստ վտանգի տակ է նաեւ ազատ, անկողմնակալ եւ օբյեկտիվ լրատվամիջոցների զարգացումը:

Հայտարարությունն ավարտվում է «Ինտերնյուսի» առաքելության բնորոշմամբ՝ հզորացնել անկախ լրատվամիջոցները եւ լրագրողների համար ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի արհեստավարժ, օբյեկտիվ ու ազնիվ տեղեկատվության տարածմանը:

Հենց այս տողերից ելնելով մտածում ես՝ «Ինտերնյուսը» նո՞ր է հասկանում, որ վաղուց արդեն, 2-3 տարուց ի վեր, Հայաստանում լրատվամիջոցները վերածվել են քարոզչամիջոցների եւ դրա մեջ մեղքի մեծագույն մասն ընկնում է այսպես կոչված ընդդիմադիր մամուլի վրա, որ անպատասխանատվության բացառիկ օրինակներ տվեց այդ ընթացքում: Օրինակներ, որոնցից յուրաքանչյուրի դեպքում Մ. Նահանգներում դատարանի վճռով կսնանկանային դրանք: Բնականաբար, այդ վիճակն ունենալու էր իր հակազդեցությունը, որի արդյունքում այժմ ունենք այն, ինչ ունենք:

«Ինտերնյուսը» եւ միջազգային մյուս կազմակերպությունները ժամանակն է, որ մտածեն լրատվամիջոցների ոչ թե հայհոյելու ազատության, այլ իսկական անկախության մասին, որի դեպքում լրատվամիջոցները կախում կունենան միայն իրենց լսարաններից:

Նամակ Լոնդոնից՝ «Ազգ»-ի հրապարակման խնդրանքով

Յարգելի «Ազգ» օրաթերթի խմբագրութիւն,

Կարդացի «Ո՞ւմ օգտին է քվեարկել Նաիրի Հունանյանը» յօդուածը, եւ պէտք է ասել՝ մի փոքր ցնցուեցի:

Քաղաքակիրթ երկրներում որեւէ անձի քուէարկութեան հրապարակումն առանց անձի թոյլատրութեան օրինազանցութիւն է համարւում, եւ հրապարակողը ենթարկւում է տուգանքի եւ մինչեւ իսկ ազատազրկման: Հայաստանն ընտրել է քաղաքակիրթ երկրների ուղին եւ փորձում է հասնել այդ մակարդակին, ինչպիսին են Գերմանիան, Ֆրանսիան... Պէտք է ասել, որ մամուլը մեծ դեր է կատարում այդ ընթացքն արագացնելու կամ դանդաղեցնելու մէջ:

Պարզ է, որ Նայիրի Յունանեանը դաւաճանել է երկրին եւ իրեն սպասում է պատիժ որպէս Հայրենիքի դաւաճանի, սակայն դա չի նշանակում հրապարակել իր քուէարկութիւնը եւ խախտել անձնական տուեալների պահպանման օրէնքը:

Անչափ սթափեցուցիչ եւ միտումնաւոր եմ համարում այն նախադասութիւնը, որ Նայիրի Յունանեանը եւ Արամ Կարապետեանը մի ժամանակ պատկանել են ՀՅԴաբնակցութեանը: Այս նախադասութիւնը որեւէ կապ չունի յօդուածի խորագրին, իմ եզրակացութեամբ՝ «Ազգ» օրաթերթը փորձում է վարկաբեկել ՀՅԴաբնակցութեանը հաւասարեցնելով այդ կուսակցութիւնը երկրի դաւաճանի եւ ոչ մէկ հեղինակութիւն ունեցող թեկնածուի հետ, ինչպիսին է Արամ Կարապետեանը: Արդեօք ճի՞շտ կը համարէք «Ազգ» օրաթերթի հեղինակութիւնը հաւասարեցնել Մուրադ Բոջոլեանի հետ, քանի որ նա ժամանակին թղթակցել է «Ազգ» օրաթերթին, բնականաբար ոչ...

ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

Գերմանիա, 27 փետրուար 2003 թ.

Ո՞վ է ԱԺՄ նախագահը

Շատերի համար էր անսպասելի, որ ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը, որը, թվում էր, ընդդիմադիր թեկնածուներից ամենագաղափարականացվածն է, հանկարծ հայտնվեց գաղափարազուրկ Ստեփան Դեմիրճյանի կողքին: Մենք այնքան միամիտ չենք, որ մտածենք, թե Վազգեն Մանուկյանին պատշտոն են խոստացել ՀԺԿ ճամբարում. անհավասարակշիռ, չմտածված քայլերը Մանուկյանի կողմից, որպես կանոն, իրենց սպասել չեն տալիս:

Հաճախ ես մտածում, թե ի՞նչն է պատճառը, որ Մանուկյանի պես գործչի քայլերը հակասում եմ միմյանց: Սակայն երբ կարդացի «Առավոտում» նրա տիկնոջ՝ Վարդուհի Իշխանյանի հետ հարցազրույցը, միանգամից հասկացա, թե որտեղից է Մանուկյանի քայլերի խառնաշփոթը: Առաջին հայացքից թվում է, թե գործ ունես ինքնասիրահարված կամ գոնե ամուսնուն սիրահարված կնոջ հետ, բայց ավելի ուշ հասկանում ես, որ ընդհակառակը՝ բավականին բարդույթավորված մեկի հետ:

Աշխարհում շատ կան դեպքեր ու դեմքեր, որոնց մասին շարունակում են ասել, թե իրականում կինն է ղեկավարում ամուսնուն: Սարսափելի ոչինչ չկա, բայց թե ինչո՞ւ է տիկին Իշխանյանը այդ հարցազրույցով փակում ամուսնու համար քաղաքականության մեջ գոնե մանեւրելու ճանապարհը, մնում է անհասկանալի, մանավանդ հարցազրույցից պարզ է դառնում, որ այդ կնոջ խելքը քաղաքականությունից բան չի կտրում:

Ավելի սթափ վերլուծության դեպքում մտածում ես, որ գուցե հենց նա՞ է ամուսնու քաղաքական բոլոր պարտությունների պատճառը: Երբ այս մասին ասացի ԱԺՄ-ից դեռ անցյալ դարում հեռացած մի նախկին ԱԺՄ-ականի, նա քմծիծաղեց, ասելով, որ Վարդուհու կեցվածքը միշտ զայրացրել է անգամ ՀՀՇ-ին, քանի որ տիկինը միշտ խառնվում էր քաղաքական որոշումներին եւ Մանուկյանից առաջ էր կարծիք հայտնում:

Իրականում ղեկավարելով ԱԺՄ-ն եւ անձամբ Վազգեն Մանուկյանին՝ Վարդուհի Իշխանյանը երեւի թե ճիշտ կանի ամուսնուց վերցնի կուսակցության ղեկը, այդ ժամանակ գոնե կգրվի պատրանքը, թե քաղաքական որոշումները կայացնում է Վազգեն Մանուկյանը կամ ԱԺՄ-ն:

Վարդուհի Իշխանյանի դերակատարման ազդեցությունը զարմանք է պատճառում նաեւ ժամանակ առ ժամանակ ԱԺՄ գրասենյակում ասուլիսին մասնակցող թղթակիցներին: Պարզապես հարցն այն է, թե իրականում ո՞վ էր անցկացնում երեկվա ասուլիսը՝ Վազգեն Մանուկյա՞նը, թե՞ Վարդուհի Իշխանյանը:

Ռ. ՉԱՐԳԱՐՅԱՆ

ԵԱՀԿ դիտորդների ղեկավարը Սահմանադրական դատարանում

Փետրվարի 28-ին ԵԱՀԿ դիտորդական առաքելության ղեկավար Պիտեր Այերը հանդիպեց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի հետ՝ ծանոթանալու ՀՀ նախագահի փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքներով ստացած դատական վեճի՝ ՍԴ-ում գործի ուսումնասիրման, նախապատրաստման եւ քննության կարգին:

Մանրամասն ծանոթացնելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքով նախատեսած ընթացակարգերին, ՍԴ նախագահը տեղեկացրեց, որ հնարավոր կարճ ժամկետում կհրավիրվի Սահմանադրական դատարանի աշխատակազմային նիստ՝ գործը քննության ընդունելու հարցը որոշելու վերաբերյալ:

ՍԴ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱԿԵՏՍԵՐ

Մի քանի պատճառներ, թե ինչու եմ ես քվեարկելու Ռոբերտ Քոչարյանի օգտին

Անկեղծ ասած, 2003 թվականի նախագահական ընտրությունների առաջին փուլի արդյունքներն ինձ որոշ չափով հուսահար արեցին: Ես նույնպես վստահ էի, որ գործող նախագահը պետք է հեշտությամբ հաղթանակ տոնի դեռևս առաջին փուլում, սակայն «մենք որոշում ենք, իսկ ասված տնօրինում», ինչպես ասվում է հայտնի ասացվածքում: Այսօր այս հարցի կապակցությամբ չէ, որ ցանկանում եմ խոսել: Խնդիրը ընտրությունների առաջին փուլին հաջորդած խիստ մտահոգիչ իրադարձությունների շղթան է, որը ակտիվորեն հրահրվում եւ բորբոքվում է մի շարք քաղաքական ուժերի կողմից վստահաբար շահադիտական նպատակներով ամեն կերպ խաթարելով երկրի ներքին կայունությունը, բեռնաթափ ներկայացնելով ազգի տարբեր հատվածների միջեւ վերադառնալ իշխանության, եւ որքան էլ գայլերը փորձեն քողարկվել գառան մորքիներով, միեւնույն է, ականջներն ու պոչը մատնում են նրանց: Իսկ վերջին օրերին նրանք ավելի բացահայտ են դարձել: Ինչպես գալիս, դեն են նետել արդեն ավելորդ դարձած այդ գառան մորքին եւ ամեն միջոց օգտագործում են սեւացնելու ներկայիս իշխանություններին, անտեսելու ավելի քան 700 000 ընտրողների օրինական կամքի արտահայտությունը, գեթ մեկ նպատակ ունենալով վերադարձ իշխանության:

Ինձ թվում է, բոլոր գիտակից, նախորդ իշխանությունների ջանքերին հակառակ «մանկուրտներ» չդարձած, հիշողությունից չզրկված մարդիկ տեսնում են այդ անձանց հիացական, էքսազախառը վիճակը, որի մեջ նրանք ընկնում են չարտոնված հանդիպումների, երթերի ժամանակ: դա նրանց տարերքն է, նրանց հարազատ միջավայրը, դրանց շնորհիվ էին նրանք 88-ին գահընկեց անում Կարեն Դեմիրճյանին (ներկայիս իրենց ոտքոտանյալի արժանապատիվ ծնողին), դրանց շնորհիվ էին փակում ատոմակայանը մի ամբողջ ժողովրդի մղելով խավարի, սովի ու ցրտի ծիրանները: դա էր նրանց հիմնական գերնպատակը: Ցավոք ժողովրդավարացման եւ ազատականացման այդ ալիքի ազդեցությամբ էյֆորիայի մեջ ընկած մեր ժողովրդին այդ ճակատագրական պահին դավաճանեց իր դարավոր իմաստությունն ու զգուշությունը: Իշխանական գահը հանձնվեց քաղաքականությունից եւ պետական կառավարումից շատ հեռու կանգնած մի խումբ մարդկանց, որոնք երկիրը կանգնեցրին քաղաքացիական պատերազմի եւ տնտեսական ու մշակութային անդունդի եզրին: Սակայն ժողովուրդն իմաստուն է, եւ այդ ճակատագրական պահին 1998-ին, երկրի ղեկը վստահվեց Ռոբերտ Քոչարյանին, մի մարդու, որը, հաղթող է, ընդ որում ոչ միայն ոգզմի դաշտում, այլեւ նախեւառաջ ինքն իրեն, իր խորհրդային եւ հետխորհրդային հոգեբանությանը, մտածելակերպին, կենսակերպին, ուժերի, որոնք իր համախոհների հետ հանուն ժողովրդի բարեկեցության եւ հայ ազգի հզորացման պատրաստ էին ցանկացած զոհողությունների, որոնք կայուն, ինքնավստահ ու ամբիցիոզ էին, բառի դրական իմաստով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ավելի քան տասնամյա գոյությունը, Հայաստանի Հանրապետության կայուն ու վերընթաց զարգացումը վերջին տարիների ընթացքում, գալիս են հաստատելու վերը արտահայտած այն համոզմունքը, որ նրանք կկարողանան էլ ավելին աղահովել մեր ազգի համար: Թող նրանք ինձ երջանկահիշատակ սպարապետը, սակայն նա ներելի շփոթության մեջ էր, երբ հայտարարում էր, որ ինքն է Ռոբերտ Քոչարյանին հրավիրել Հայաստան: Ռոբերտ Քոչարյանի մեծ հայրենիք վերադարձը ազգաշահոյանական, գոյապահպանական անհրաժեշտություն էր եւ դա կանխորոշված էր ի վերուստ, դա հայ ազգի հավաքական կամքի եւ իմաստության արգասիքն էր: վերջին մի քանի հարյուր տարիների ընթացքում մենք առաջին անգամ է, որ ունենք հաղթող նախագահ, մարտիկ նախագահ, իր նպատակներին վստահորեն հավատացող եւ դրանք իրագործող նախագահ, իր խոստումներին հավատարիմ նախագահ, որը ցուցաբերում է մեր ազգին այդքան պակասող հանդուրժողականության զարմանալի հատկանիշներ, ոչ մի անգամ չպատասխանելով իր հասցեին ամեն օր, ամեն վայրկյան հնչող հայհոյանքներին, հերյուրանքներին, թույլատրելիի սահմանն անցնող անձնական վիրավորանքներին, պահպանելով սառնասրտություն եւ բարեկրթություն, մի այնպիսի հզոր դաս տալով այն անձանց եւ քաղաքական ուժերին, որ գիտակից լինելու եւ մի փոքր արժանապատվություն ունենալու դեպքում նրանք պետք է ուղղակի ամաչեին իրենց արածների եւ ասածների համար: Ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է հանուն այդ նույն ժողովրդի բարօրության, սակայն ժողովրդավարությունը չպետք է շփոթել ամբոխավարության, ամբոխահաճության, աթոռակալության հետ: Շատ հեշտ է լինելով գործող նախագահ եւ գնալ նմանատիպ քայլերի ընտրությունների նախօրյակին նվազեցնել կամ վերացնել հարկերը, տրամադրել բազմապիսի արտոնություններ եւ նպաստներ, հին հռոմի տարբերակով, «հաց եւ զվարճանքներ» աղահովելով բթացնել ժողովրդին եւ հեշտությամբ վերընտրվել, սակայն դա չի կարող երկար շարունակվել, քանի որ այդ նույն «հացն ու զվարճանքը» տեւաղես աղահովելու համար պետք են տեւական միջոցներ, իսկ դրանք գոյանում են այն դեպքում, երբ երկրի տնտեսությունը գործում է, երբ հարկային եւ օրենսդրական համակարգերն աշխատում են բնականոն հունով: Այդ իսկ պատճառով առավել հարգանքի է արժանի մեր գործող նախագահը, որը, չվախենալով ոչ պոպուլիստական քայլերից, հնուս վիրաբույժի նման գերադասում է ազնվորեն գործել եւ, ցավ պատճառելով հիվանդին, հեռացնել խոցը, քան զանազան հանգստացուցիչների միջոցով ցավը բթացնել, ավելի խորը թաքցնել: Վերջին հաշվով ավելի լավ է ազնվորեն իմանալ, թե ինչ խնդիրներ են կանգնած երկրի եւ ազգի առաջ, ինչպես է նախագահը տեսնում դրանց հաղթահարման ուղիները, երկրի տնտեսական, սոցիալ-քաղաքական զարգացումները առաջիկա տարիների ընթացքում, ուսումնասիրել այն լուրջ տնտեսագիտական եւ այլ ցուցանիշները, որոնք ներկայացված են նրա նախընտրական ծրագրում, քան գնալ դատարկ եւ անօգուտ հանդիպումների տեսնելու եւ լսելու նախկին եւ ավելի նախկին իշխանությունների որոշ ներկայացուցիչների, Օ՜ կամ համարյա դրան հավասար քվեներ ստացած նախագահի նախկին որոշ թեկնածուների բարբաջանքները: Ալիեւի որդես ՀՀ նախագահի նախընտրելիության, մատեր եւ այլ բաներ ժողովրդի վրա թափ տալու, ինքնահոչակ նախագահ հորջորջվելու եւ դրանից մեծագույն հրճվանքի մեջ գտնվելու վերաբերյալ:

Պետք չէ ունենալ բարձրագույն կրթություն կամ լինել մեծ մաթեմատիկոս, վիճակագիր կամ տնտեսագետ, տեսնելու համար, որ վերջին մի քանի տարիների ընթացքում ժողովրդի մի զգալի հատվածի սոցիալ-տնտեսական վիճակը դժվարությամբ, սակայն հաստատուն քայլերով բարելավվում է, որ մեր բոլորիս սիրելի Երեւանը ավելի գեղեցկանում եւ երիտասարդանում է, որ ավելի շատ հարսանիքներ են լինում, ծնելիությունը դանդաղորեն աճում է, որ կրթական եւ առողջապահական համակարգերի բարեփոխումներն արդեն սկսել են տալ իրենց առաջին արդյունքները, եւ այս ամենը հանգեցնում է ինձ այն համոզմունքին, որ Ռոբերտ Քոչարյանի վերընտրման դեպքում հետագա տնտեսական բարեփոխումների ընթացքը չի դանդաղի, այլ կարագանա, ինչը թույլ կտա բարելավել բնակչության ավելի մեծ հատվածի բարեկեցությունը, նվազեցնել չքավորությունն ու հետամնացությունը եւ, ի վերջո, հաղթահարել դրանք: Չէ որ մենք ստեղծագործ եւ համբերատար ժողովուրդ ենք, դա է ապացուցում մեր ամբողջ պատմական անցյալը, ինչպես նաեւ այն իրականությունը, որ արտերկրում գտնվող մեր բոլոր հայրենակիցները կարողանում են գտնել իրենց տեղն այդ օտար երկրներում, դառնալ նրանց տնտեսական համակարգի մի բաղկացուցիչ մասը, ուստի պետք է նույն նպատակն ունենալ եւ նույնին ձգտել նաեւ Մայր Հայրենիքում: Պետք չէ սպասել հրաշքի, պետք է ուղղակի աշխատել նախագահի հետ մի թիմ դարձած, լինել ավելի հանդուրժող եւ ազգասեր, քանի որ միայն դա է հայ ազգի գոյատեւման եւ հարատեւման բանալին:

Հոդվածս գրելու ընթացքում ինձ անընդհատ մի հարց էր տանջում. ինչու Տիգրան Մեծից ի վեր իր պատմական հայկական հողերը անընդհատ կորցնող մեր ժողովուրդը չի տեսնում կամ պատշաճ կերպով չի ընկալում այն էական, կարեւորագույն, ազգապահպան իրողությունը, որ մենք վերջապես թոթափելով պարտվողի հոգեբանությունը, կարողացել ենք ազատագրել մեր հայրենիքի ամենագողտրիկ անկյուններից մեկը մեր Արցախը: Չեմ պատկերացնում՝ Շուշիի ծորը, Դաղիվանքը, Գանձասարը, Ամարասը եւ այլ հրաշալիքները տեսնելուց հետո, մի՞թե կարելի է դեմքին գիտունի արտահայտություն տալով լրջորեն հակադրել, անհանդուրժողականություն սերմանել Հայաստանի եւ մեր հայրենիքի մի հատվածի, մեր ազգի՝ կարծես անհույս կորսված, սակայն ասվածահաճո մի հրաշքով ու մեր հայ զավակների սուրբ արյունով վերագտնված մի կարեւորագույն հատվածի միջեւ. հայրենատեր, հայկականությունը ավելի անխաթար պահած, համարյա երբեք իր անկախության համար պայքարը չդադարեցրած արցախցուն հակադրելով մեր հայրենիքի մեկ այլ հատվածի, նրանց պիտակելով «թուրք», իսկ մեզ «հայ»: Այդ որքան ժանտ ու թույն պետք է կուտակված լինեն այս բառերն արտահայտողի ուրտում եւ ուղեղում, որ նա մեր ազգին Վաչագան Բարեպաշտ արքա, Հովհաննես Բաղրամյան, Հովհաննես Բաբաջանյան զորավարներ, արվեստի եւ մշակույթի հոչակավոր գործիչներ տված մարդկանց այդպես պիտակի: Պատկերացնում եմ, թե որքան են ուրախացել մեր թշնամիները: Մի՞թե կարելի է պատեհապաշտական, այսպես-կյանային խնդիրների լուծման, աթոռ գրավելու սին նպատակներով գնալ նման քայլերի, չէ՞ որ ժողովուրդը չի ների նման վարվելակերպը: Անհասկանալի է, ինչպե՞ս կարելի է փետրվարի 20-ին հանրահավաքներ գումարել, բազմահազար մարդկանց կտրել իրենց բնականոն կյանքից եւ պահանջել լոկ աթոռ, սակայն գեթ մեկ բառով անգամ չհիշատակել, չնշել մեր հայրենիքի մի կարեւոր մասի, մեր Արցախի ազատագրական պայքարի փառապանծ 15-ամյա հոբելյանը, որը, հավատացած եմ, առհավատյան է մեր ազգի ու պետականության վերածննդի ու հզորացման:

Մի ասացվածք կա, «պատմությունը կրկնվում է երկու անգամ՝ մեկ անգամ ողբերգության, երկրորդ անգամ ֆարսի ձեւով»: Երեւի մեր նախագահի ճակատագիրն է ամեն անգամ ընտրվել երկփուլ ընտրություններով, եւ ամեն անգամ ընտրաթերթիկում նրան մրցակցում է Դեմիրճյան ազգանունով անձնավորություն: Սակայն, եթե 1998 թվականի Կարեն Դեմիրճյան բազմափորձ քաղաքական գործիչի չընտրվելը երեւի ողբերգություն էր նրա համար անձնապես, քանի որ նշանակում էր ժողովրդի մեծամասնության մերժումը՝ վերադարձ լճացման եւ տեղում դոփելու տարիները (ընդ որում պետք է նշեմ, որ ի պատիվ այդ մեծագույն քաղաքական գործչի, նա կարողացավ հանուն իր ազգի բարգավաճման եւ հզորացման հաղթահարել այդ մերժումը եւ գործող նախագահի հետ (ծվել մեր պետականության կայացման եւ հզորացման գործին), արդա 2003 թվականին Կարենի որդի Ստեփան Դեմիրճյանի մասնակցությունն ընտրությունների երկրորդ փուլին կարող է դիտվել որպես իմաստուն ասացվածքի հաստատում: Մի՞թե դարս չէ այն, որ ամբողջ կյանքում գործարանի տնօրենի պաշտոնից բարձր որեւէ դիրք չգրաված, քաղաքական ասպարեզում բացարձակ նորելուկ եւ քաղաքականությունից բացարձակ բոբիկ մի անձնավորություն մարտահրավեր է նետում քաղաքական ղեկավարության ավելի քան տասնամյա փորձ ունեցող, արցախյան ազատամարտի հաղթող, արտաքին աշխարհում ընդունվող եւ մեծ հարգանք վայելող, երկրի տնտեսական զարգացման ոլորտում իր կայացածությունը ապացուցած նախագահին չունենալով ոչ տնտեսական ծրագիր, ոչ դարաբաղյան հիմնահարցի կարգավորման ծրագիր, ոչ արտաքին աշխարհում ճանաչվածություն, ոչ էլ մի քանի նախադասություն իրար հետեւից կապելու ունակություն: Հասկացողին պարզ է, որ նման նախագահը ղեկավարելու է, այլ ոչ թե ղեկավարելու, եւ նրա ընտրությամբ ՀՀՇ-ն ճանապարհ է հարթում նախկին նախագահի իրենց «ծրագրած հաղթական վերադարձի» համար:

Համոզված եմ, որ Ղարաբաղյան հիմնախնդրի ֆոնի վրա, մեր համազգային բոլոր խնդիրները երկրորդ պլան են անցնում, քանի որ այնտեղ է որոշվում մեր լինել-չլինելու, հայոց պետականության գոյատեւման հարցը, եւ այս փուլում մեզ անհրաժեշտ է նախագահ, որը լավ է հասկանում հակառակորդի մտավոր եւ հոգեկան աշխարհի բոլոր նրբերանգները: Այո, պարոնայք «իշխանատենչ ընդդիմադիրներ», թշնամու լծի տակ ապրելը թերություն չէ, հայ ազգի գոյության տվյալ պատմական ժամանակահատվածում դա մեծագույն առավելություն է, որը մենք պետք է ըստ ամենայնի պահպանենք: Դարերի ընթացքում առաջին անգամ է, որ մեր թշնամին թե ոգզմի դաշտում եւ թե բանակցությունների սեղանի շուրջն ունի իրեն արժանի մրցակից, եւ ցանկանում եմ ընդգծել՝ երիտասարդ, բանիմաց եւ հաղթող մրցակից: Մի վայրկյան պատկերացրեք Կարենի որդի Ստեփան Դեմիրճյանին Ալիեւի հետ բանակցելիս, եւ կարծում եմ դույզն իսկ չեք տատանվի, թե ում օգտին պետք է կատարեք ձեր ընտրությունը 2003 թվականի մարտի 5-ին:

Ցանկանում եմ հնարավոր ընդդիմախոսներիս նախօրոք զգուշացնել, որ ես որեւէ պետական պաշտոն չեմ զբաղեցնում, բնիկ երեւանցի եմ, երկու կողմից էլ շառավիղն եմ 1860-ական թվականներից այստեղ հաստատված իմ ծնողներիս նախահայրերի, իսկ Արցախի հետ որեւէ ազգակցական կապեր չունեմ, եթե հաշվի չառնենք այն հանգամանքը, որ գենետիկորեն բոլոր հայերն էլ իրար հարազատ են, սակայն 1988-ին առաջին անգամ լինելով Ղարաբաղում, մշտապես կրում եմ այդ երկրամասի մշտական երկրպագուի եւ հավատարիմ բարեկամի հավատամքը:

ՎԱՀԱԳՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ,
իրավագիտության թեկնածու
ՀՈՒԱԿ Հանրապետական
վարչության անդամ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«Ինչպես կարելի է ընտրել որդուն՝ հոր արժանիքներով»

Ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում մեր քաղաքացիներն ու սփյուռքահայերը բավականին ակտիվորեն են արձագանքում նախագահական ընտրություններին եւ լրատվամիջոցների կողմից դրանց լուսաբանման առանձնահատկություններին:

Յուրի Անանիկյանը Լոնդոնից «Ազգին» ուղարկած իր նամակում նշում է, որ ամբողջովին համամիտ է մեր թերթի մտահոգությանը նախագահական ընտրությունների շուրջ ստեղծված իրադրության եւ այն պոտենցիալ վնասի վերաբերյալ, որ կարող է ունենալ Հայաստանը Ստեփան Դեմիրճյանի նախագահ ընտրվելու դեպքում:

Ըստ պրն Անանիկյանի, ընդդիմության գործողություններից պարզ է, որ նրա օրակարգում բացակայում է քաղաքակիրթ կառավարումն ու կարգուկանոն ասվածը: Սակայն գուցե ժամանակն է, որ Հայաստանի ազդեցիկ ՁԼՄ-ները բացահայտորեն կանգնեն Քոչարյանի թիկունքում, անկախ այն բանից՝ անձնապես հավանում են նրան, թե ոչ, քանի որ ընդդիմության հաղթանակի դեպքում կվտանգվի տնտեսությունը, կվարկաբեկվի երկիրը՝ հայտնվելով ոչ բանիմաց մարդկանց ձեռքում:

Յուրի Անանիկյանն այնուհետեւ գրում է, որ, իր համոզմամբ, Դեմիրճյանի օգտին քվեարկողները նույնպես, իրենց թեկնածուի հաղթանակի դեպքում, կտառապեն նույնքան, ինչքան մնացածը:

Նամակագիրը կարծիք է հայտնում, թե հենց այս մասին պետք է խոսի մամուլը՝ մարդկանց գիտակցությանը հասցնելու համար: Չեզոքություն պահպանելու դեպքում վտանգը շատ մեծ է:

Մեկ այլ նամակագիր՝ **Տիգրան Մուրադյանն** ԱՄՆ-ից «Ազգին» գրում է, որ մտահոգված է Հայաստանի քաղաքական զարգացումներից: Պրն Մուրադյանը գտնում է, որ Հայաստանը կանգնած է վտանգի առաջ, որը գալիս է ընդդիմադիր լիդերներից:

Քոչարյանի կառավարության ժամանակ, ըստ նամակագրի, մեր երկիրն ունեցավ հաստատուն տնտեսական եւ քաղաքական ձեռքբերումներ, միջազգային մակարդակի բարձրացվեց Ցեղասպանության հարցը:

Տիգրան Մուրադյանը նշում է, որ ժամանակին ընտրել է Կարեն Դեմիրճյանին, բայց զարմանք է հայտնում, թե չճանաչելով որդուն, ինչպես կարելի է լիդեր ընտրել՝ հենվելով հոր արժանիքների վրա:

Վահե Պողոսյանն էլ, իր հակիրճ էլեկտրոնային նամակում հայտնում է, որ ցանկանում է ընտրված տեսնել Ռոբերտ Քոչարյանին: Պրն Պողոսյանն ավելացնում է, որ Քոչարյանին դեմ հանդես եկողները չեն համակերպվում նրա օգտին տրված այդքան ձայների իրողության հետ:

Իր էլեկտրոնային փոստի հասցեին (bklik 2002-Yahoo) նմանվող նամակ է **«Ազգին»** ուղարկել **Մեր Վարդանյանը**:

«Էս երկիրը, միեւնույն է, ոտքի կկանգնի, ինչ էլ տպագրեք, ինչպես էլ փորձեք հաճոյանալ ձեր տերերին, պիտի հասկանաք, որ սովետի ժամանակներն անցել են», գրում է Մերը: Վերջում էլ ավելացնում. «Հողը գլխներիդ թեթեւ լինի», չնշելով, թե ո՞ւմ են հասցեագրված իր խոսքերը:

Ներկայացված նամակներն **«Ազգի»** էլեկտրոնային հասցեով ստացվածների մի փոքր մասն էին միայն:

Ա. Հ.

Թուրքիայի խորհրդարանը հեռաձգեց կառավարական որոշման քննարկումը

Երբ կառավարության անդամները լքեցին դահլիճը

Փետրվարի 27-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը՝ Մեջլիսն արդեն երրորդ անգամ հետաձգեց վարչապետ Աբդուլլահ Գյուլի կառավարության «երկրի տարածքում ամերիկյան զորքերի տեղակայման եւ պատերազմական գործողություններին թուրքական զինված ուժերի մասնակցության մասին» որոշման նախագծի քննարկումը: Նույն օրը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը Նիկոսիայում հանդիպեց «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» նախագահ Ռաուֆ Դենքթաշին եւ Կիպրոսի Հանրապետության նորընտիր նախագահ Թասոս Պապադոպուլոսին, որի երդմնառության արարողությունը տեղի ունեցավ փետրվարի 28-ին:

Հանդիպումների ավարտին Անանը, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, հայտարարել է, որ Կիպրոսում կողմերի բանակցությունները կշարունակվեն եւս 10 օր, եթե նրանք ընդհանուր հայտարարի գան, ապա կարելի է հանրաքվե անցկացնել: Խոսքը Կիպրոսի միասնությունը հույն եւ թուրք բնակչության հանրաքվեի միջոցով վերականգնելու եւ Եվրամիությանը որպես միացյալ պետություն անդամակցելու մասին է, որը նախատեսվում է ապրիլի 18-ին:

Նկատի ունենալով կիպրացի թուրքերի անընդմեջ ելույթներն ընդդեմ Դենքթաշի վարչախմբի եւ շարունակական հանրաքվեները՝ «Միավորված Կիպրոս» կարգախոսներով, դժվար չէ կռահել հանրաքվեի արդյունքները: Այլ կերպ, թուրքական հատվածի բնակչության գերակշռող մասը ղեկավարությունից պահանջում է անհապաղ ընդունել Կիպրոսի վերաբերյալ ՄԱԿ-ի բանաձեւը: Ըստ երեւույթին, բնակչության պահանջներին դիմադրելու Դենքթաշի հնարավորություններն սպառման եզրին են, որ նրա Թուրքիայից նշանակված խորհրդական պրոֆ. Մյումթազ Սոյսալն, ի պատասխան թուրքական հեռուստատեսության հարցի, ասաց. «Եթե բանաձեւը հանրաքվեով ընդունվի, ապա Դենքթաշը հրաժարական կտա»:

Համենայն դեպս, Կոֆի Անանը կողմերին մինչեւ մարտի 25-ը ժամանակ է տվել: Ինչ վերաբերում է կառավարական վերոհիշյալ որոշմանը, ապա պետք է ասել, որ դա ներկայացվել էր Մեջլիսի լիագումար նիստի քննարկմանը: Դրա նախօրյակին նիստի էին հրավիրվել Թուրքիայում իշխող «Արդարություն եւ բարգավաճում», ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցությունների պատգամավորական խմբակցությունները: Ժողովրդա-հանրապետականները որոշել են կառավարական օրինագծին դեմ քվեարկել: Այդ ընթացքում խմբակցության ղեկավար Դենիզ Բայքալը, որը միաժամանակ կուսակցության նախագահն է նաեւ, հայտարարել է. «Թուրքիայի արժանապատվությունը պաշտպանելու են ոչ թե պատերազմի կողմնակիցները, այլ դրա հակառակորդները»:

Ի տարբերություն Բայքալի, Ռեջեփ Թայիփ Էրդողանն ամեն կերպ փորձել է իր կուսակցության պատգամավորներին համոզել, որպեսզի ապահովի կառավարական որոշման ընդունումը Մեջլիսում:

Հատկանշական է, որ հակաիրաքյան պատերազմում ԱՄՆ-ին աջակցելու այդ որոշմանը հակադրվում էր Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը, իսկ նրան այդ հարցում պաշտպանում է իշխող կուսակցության շարքերից Մեջլիսի նախագահ ընտրված Բյուլենթ Արընչը: Ահա այս պայմաններում կառավարական որոշումը դրվում է Մեջլիսի փետրվարի 27-ի լիագումար նիստի օրակարգում: Սակայն, երբ որոշումը քննարկելու առնչությամբ քվեարկություն է հայտարարվում, կառավարության անդամները, որոնք միաբանաբեւի ընդունման անհրաժեշտությամբ: Սրանք, սակայն, ընդամենը պատճառաբանություններ են, ոչ թե պատճառներ, քանի որ կառավարությունն այս ամենի մասին գիտեր մինչ հակաիրաքյան պատերազմում ԱՄՆ-ին աջակցելու որոշումը Մեջլիսի քննարկմանը ներկայացնելը:

Քվեարկության պահին Մեջլիսը լքելու համար կառավարության անդամները պետք է լուրջ պատճառներ ունենային: Որո՞նք են դրանք: Այս հարցին դժվար է սպառիչ պատասխան տալ: Բայց, որ փետրվարի 28-ին կառավարական նշված որոշումը մի անգամ եւս մանրամասնորեն քննարկվեց Ազգային անվտանգության խորհրդի հերթական նիստում, փաստ է: Չի բացառվում, որ թուրքական զինված ուժերի ներկայացուցիչները, որոնք առանցքային դիրք ունեն այդ խորհրդում, ընթացքից հետաձգման առումով նախագուշացնեն կառավարության անդամներին, եւ այդ զգուշացումը պայմանավորված լինի ամերիկյան կողմի հետ տարվող գաղտնի բանակցություններով:

Համենայն դեպս, որոշման քննարկումը նշանակված է Մեջլիսի այսօրվա նիստում, իսկ նիստը, ինչպես այդ մասին նշեց Էրդողանը, լինելու է փակ, գաղտնի:

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՅԱՆ

Նավթի ռեկորդային գներ Ծոցի պատերազմից ի վեր

Նավթի համաշխարհային գները շարունակում են աճել, մոտենալով այն մակարդակին, որին հասել էին 12 տարի առաջ Պարսից ծոցի պատերազմի ժամանակ: BBC-ն հաղորդում է, որ հինգշաբթի օրը մեկ բարել նավթի գինը բարձրացել է 1,04 դոլարով, կազմելով 38,77 դոլար: «Բրենտ» մակնիշի նավթը թանկացել է 58 սենթով, եւ այժմ մեկ բարելի գինը 33,65 դոլար է:

Պարսից ծոցի 1990-1991 պատերազմի ժամանակ նավթի գինն անցել էր 41 դոլարից: Այսօր բորսայական վերլուծաբանները գտնում են, որ ներկա պայմաններում 40 դոլարը միանգամայն իրատեսական թիվ է:

BBC-ն նշում է, որ գների ներկայիս աճը պայմանավորված է 2 գործոններով: Առաջինն Իրաքի շուրջն ստեղծված իրավիճակի սրումն է, երկրորդը՝ ԱՄՆ-ի արեւելքում հայտնված ճնշումները, որոնց պատճառով ջեռուցման տարեշրջանը կարող է երկարաձգվել:

ԱՄՆ էներգետիկայի նախարար Սփենսեր Աբրահամի հայտարարության համաձայն, չի բացառվում, որ վարչակազմն սկսի օգտագործել նավթի ռազմավարական պաշարները, որոնք կազմում են 600 մլն բարել: Վերջին անգամ նման որոշում ընդունվել էր 2000 թ. սեպտեմբերին, երբ նավթի գինը հասել էր 37,8 դոլարի:

Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը (OPEC) փորձում է մասամբ փարատել այն երկյուղները, թե Իրաքի պատերազմի դեպքում նավթի գները կշարունակեն արագորեն բարձրանալ: Կազմակերպության գլխավոր քարտուղար Ալվարո Սիլվա Կալդերոնը հայտարարել է, որ OPEC-ը նավթը չի օգտագործի որպես զենք: Իր ելույթով Կալդերոնը հակադրվել է ավելի վաղ Մալայզիայի վարչապետ Մահաթիր Մոհամմադի արած այն հայտարարությանը, թե «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության հինգ տասնյակ երկրներն Իրաքի պատերազմի ծագման դեպքում օգտագործելու են նավթի զենքը: Մոհամմադն առաջարկել էր «նավթարգելք» սահմանել Արեւմուտքի երկրների նկատմամբ, որպեսզի վերջիններս ստիպված լինեն հրաժարվել Իրաքի դեմ պատերազմի սանձազերծումից:

Կոնգրեսն արգելեց մարդու նմանապատճենումը

ԱՄՆ Կոնգրեսն օրինագիծ է ընդունել մարդու նմանապատճենումն արգելելու մասին: BBC-ն հաղորդում է, որ Սենատում օրինագծի հաստատման դեպքում օրինախախտումները ենթակա կլինեն մինչեւ 10 տարի բանտարկության եւ մեկ միլիոն դոլար տուգանքի: Օրինագծի օգտին քվեարկել է 241 կոնգրեսական, դեմ՝ 155-ը: 2001 թ. հուլիսին Կոնգրեսն արդեն ընդունել էր համանման փաստաթուղթ, որը, սակայն, չէր հաստատվել Սենատում:

Նոր օրինագիծը, որը կազմել է սենատորների միջկուսակցական կոալիցիան, արտահայտում է Ջորջ Բուշի վարչակազմի դիրքորոշումը նմանապատճենման հարցերի առնչությամբ: Փաստաթղթում նշվում է, որ մարդու սաղմը մարդ է դեռ նախքան արգանդին պատվաստվելը, եւ գիտական նպատակներով դրա քայքայումն անբարոյական կլիներ:

Կոնգրեսականները մերժել են այն ուղղումները, որոնցով արդարացվում են պարկինսոնիզմի, Ալցհայմերի հիվանդության եւ շաքարախտի բուժմանն առնչվող հետազոտությունները: Հանրապետականների անունից կոնգրեսական Այու Մայրիկը հայտարարել է, որ նմանապատճենման մասնակի արգելումը «կօրինականացներ մարդկության պատմության մեջ ամենանողկալի եւ վտանգավոր գործունեությունը»:

Նախագահ Ջորջ Բուշը հավանություն է տվել Կոնգրեսի որոշմանը, ասելով, թե «բոլոր ամերիկացիների պես» ինքն էլ է գտնում, որ մարդու նմանապատճենումը կբերի «միայն տհաճություններ»:

ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Պարսից ծոց են տեղափոխվում B-2 «անտեսանելի» ռմբակոծիչներ

ԱՄՆ բանակի խոսնակի հայտարարության համաձայն, Պարսից ծոցի շրջան են տեղափոխվում ամերիկյան օդուժի B-2 ռմբակոծիչներ՝ «ի դեպս հավանական մարտերի»: Միսուրիի նահանգի օդային ռազմակայանի ներկայացուցիչը Ֆրանսուրեսի թղթակցին հայտնել է, որ օդուժի 509-րդ էսկադրիլիան տեղափոխության հրաման է ստացել «օրերեսիվ անվտանգության նկատառումներով»:



Ռադարների համար «անտեսանելի» համարվող B-2 նորագույն ռմբակոծիչները, ըստ Ֆրանսուրեսի, կարող են միջակա վայրէջքներ կատարել Անգլիայում եւ Դիեգո Գարսիա կղզում հատկապես հանդերձավորված ամերիկյան ռազմակայաններում: Չի բացառվում նաեւ դրանց թռիչքը Պարսից ծոց անմիջականորեն Միսուրիի նահանգից:

Ամերիկյան օդուժի պարծանքը հանդիսացող B-2 ռազմավարական ռմբակոծիչներից յուրաքանչյուրն արժե 2,1 մլրդ դոլար: Մեծ բարձրությունից ռմբակոծիչը կարող է հակառակորդի վրա նետել արբանյակային կառավարման 16 ռումբ (յուրաքանչյուրը՝ 900 կգ): Օդուժի գլխավոր շտաբի պետ, գեներալ Ջոն Ջամփերի խոսքերով, աշխարհի որեւէ տարածաշրջանում B-2 տիպի 4-5 ռմբակոծիչների առկայությունը բավական կլիներ «մեծ ավերներ» գործելու համար: Ամերիկացիներն ունեն նման 21 ռմբակոծիչ: B-2-ն անցյալ տարի օգտագործվել է Աֆղանստանում, 1999 թ.՝ Կոսովոյում:

Ամերիկյան լրատվամիջոցների տվյալներով, մարտի 3-ին Սան Դիեգոյի նավահանգստից Պարսից ծոց կմեկնեն նաեւ «Նիմից» ավիակիրը եւ 5 այլ ռազմանավեր: «Նիմիցի» վրա կան 5500 զինծառայող եւ 70 ռազմաօդանավ: Արդեն Պարսից ծոցում են «Աբրահամ Լինքոլն», «Քոնսթելեյշն» եւ «Քիթի հոկ» ավիակիրները, երկու ուրիշներն էլ Միջերկրական ծովի արեւելքում են:

Միաժամանակ հաղորդվում է իրաքյան զորքերի վերադասավորումների մասին: ԱՄՆ զինված ուժերի շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահ, գեներալ Ռիչարդ Մայերսը լրագրողներին հայտնել է, որ Իրաքի հյուսիսից զորքերը մոտեցվում են Բաղդադին եւ Թիկրիթ քաղաքին, որը նախագահ Սադդամ Հուսեյնի ծննդավայրն է: Պենտագոնի փորձագետների կարծիքով, իրաքյան զորքերը կկուտակվեն խտաբնակ շրջաններում, մասնավորապես Բաղդադում, որպեսզի ամերիկացիներն ստիպված լինեն մարտեր մղել քաղաքային պայմաններում եւ փչ օգտագործեն օդուժը:

Իրաքը համաձայնեց ոչնչացնել «Ալ Սամուդ» հրթիռները

Իրաքը սկզբունքորեն համաձայնել է ոչնչացնել իր «Ալ Սամուդ-2» հրթիռները, բայց ՄԱԿ-ի տեսուչները հավելյալ պարզաբանումներ են պահանջել այդ առնչությամբ: ՄԱԿ-ի պաշտոնյաներից մեկը Ռոյթերի թղթակցին ասել է, որ միջազգային տեսուչներն ուզում են ստույգ պարզել ՄԱԿ-ին Իրաքի հղած նամակի իմաստը:

ՄԱԿ-ն օրերս Իրաքից պահանջել էր մինչեւ շաբաթ սկսել «Ալ Սամուդ-2» հրթիռների ոչնչացումը, որոնց հեռահարությունը 150 կմ-ից ավելի է: Դրանք ոչնչացնելու պատրաստակամություն է հայտնել Սադդամ Հուսեյնի խորհրդական Ամեր ալ Սաադին ՄԱԿ-ի տեսուչների խմբի ղեկավար Հանս Բլիքսին գրած նամակում: Վերջինս Իրաքից նաեւ պահանջել էր ոչնչացնել «Ալ Սամուդ-2»-ի հետ կապված բոլոր շարժիչները, մարտագլխիկները եւ արձակման կայանները:

«Լիբերասիոն» թերթի տվյալներով, նամակում իրաքցիները խորհուրդներ են հարցնում այդ ամենի ոչնչացման տեխնիկական կողմերի վերաբերյալ: Միաժամանակ թերթը նշում է, որ ՄԱԿ-ի տեսչական խումբը չի հրապարակել նամակը եւ որեւէ պատճեն չի տվել նույնիսկ Անվտանգության խորհրդի անդամներին:

ԱՄՆ իշխանությունները նսեմացրել են իրաքցիների պատասխանի կարեւորությունը, դարձյալ պնդելով, թե Բաղդադը չի կատարում իր զանգվածային բնաջնջման զենքը ոչնչացնելու Անվտանգության խորհրդի պահանջը: ԱՄՆ պետքարտուղար Դոնալդ Ռամսֆելդը հայտարարել է, թե ինքը որեւէ փոփոխություն չի տեսնում Սադդամ Հուսեյնի դիրքորոշման մեջ: «Տարիներ շարունակ իրավիճակը նույնն է», Վաշինգտոնում ասել է նա լրագրողներին:

Իրաքցիների պատասխանն ստանալուց առաջ համանման միտք էր արտահայտել նաեւ նախագահ Ջորջ Բուշը: «Հրթիռները սառցալեռան լոկ երեւացող մասն են: Գլխավոր հարցը լիակատար զինաթափումն է, որից Իրաքը հրաժարվում է», Սպիտակ տանը լրագրողներին ասել էր նա:

Հրթիռների ոչնչացման պահանջը Բաղդադին դրել է երկընտրանքի առջեւ: Ենթարկվելը կկրճատի նրա զինանոցը ԱՄՆ-ի հարձակման նախօրեին: Իսկ մերժումն ամերիկացիները կարող են մեկնաբանել որպես ՄԱԿ-ի հետ գործակցությունից հրաժարում, ինչը կարող է արդարացնել հակաիրաքյան պատերազմի սանձազերծումը:

Պ. Բ.

ԿԻՆՈ

ԱՋԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1994 թվականին Կաննի միջազգային փառատոնում ֆրանսիական կինոյի ամենամեծ հույսերը կապված էին Ալեխանդր Դյումայի հռչակավոր վեպերից մեկի՝ «Մարգո թագուհու» էկրանային տարբերակի հետ, որն իրականացրել էր նկարահանման հրապարակում հայտնված թատերական ռեժիսոր Պատրիս Շերոն: Այս պատմական կինոկոթողի համար ոչինչ չէր խնայվել: Նախապատրաստական աշխատանքն ու նկարահանումները տևել էին շուրջ հինգ տարի, ծախսվել էր մոտ 150 միլիոն ֆրանկ: Դերասանախումբն առաջնակարգ էր, ծոխ զգեստները՝ ամենաթանկարժեքը ֆրանսիական կինոյի պատմության մեջ: Ֆիլմի ամենազորեղ հաղթաթղթերից մեկը «Իզաբել անունով մարգարիտն» էր՝ հենց Մարգարիտ թագուհու դերում, Իզաբել Աջանին, որն ընկալվում էր իբրեւ անուրջների կին՝ ազգային պարծանքի պատվանդանին: Ի դեպ, ժամանակին նա մեծ անակնկալի բերեց ֆրանսիացիներին, երբ ի պատասխան «գալլերի հինավուրց հողը արաբներից մաքրելու» օվինիստական կոչերին՝ հայտարարեց, որ ազգությամբ բնավ էլ ֆրանսուհի չէ: Նրա մայրը գերմանուհի էր, իսկ հայրը՝ ալժիրցի, որը հայկական ծագում ուներ, ինչպես Աջանին ինքն է հայտնել մեր նշանավոր հայրենակից Արտավազդ Փելեշյանին Փարիզում կայացած իրենց հանդիպման ժամանակ: Կինոակադեմիայի շնորհած «Սեզար» մրցանակների ճանակով նրան հավասարը չկար: Երբ 1989-ին Իզաբելը նվաճեց իր երրորդ «Սեզարը»՝ ճանաչագործ Կամիլ Կլոդելից ոչ պակաս վարպետությամբ կերտելով նրա ողբերգական կերպարը Բրունո Նյուիտենի համանուն ֆիլմում, կինոակադեմիկոսները վերջապես գլխի ընկան, որ ամեն տարի ստիպված պիտի լինեն երկրի բարձրագույն կինոպարգեւը հանձնել նույն Աջանինին եւ մրցույթի գաղափարը փրկելու համար շտապեցին նրա հետ մեկընդմիշտ հաշիվները փակել՝ պատվավոր «Սեզար» շնորհելով:

Մարգո թագուհու դերը հենց սկզբից նախատեսված էր Աջանինի համար, որն իսկապես ստեղծել է իր լավագույն կերպարներից մեկը: Բայց Կաննի մրցանակը, սպասումներին հակառակ, բաժին ընկավ ոչ թե նրան, այլ մայր թագուհու՝ Կատերինա Մեդիչիի դերակատար Վիրնա Լիզիին:

Աջանին Կաննի մրցանակակիր է դարձել դեռ 1981-ին, երբ ցնցող տպավորություն գործեց Անջեյ Ժուլավսկու «Դիվահարը» ֆիլմում: Իսկ այս անգամ փառատոնի կուլիսներում լուրեր էին պտտվում, թե նա պարզապես հենց Դյումայի վեպերին սազական խաղադավանի զոհ է: Ժաննա Մորոն, որն այդ տարի գլխավորում էր փառատոնի մեծ ժյուրին, չորս տասնամյակ առաջ ստեղծված «Մարգո թագուհու» նախորդ էկրանացման գլխավոր դերակատարուհին էր եւ գուցե իսկապես համարում էր, որ Աջանինին մրցանակ հանձնելով հրապարակավ կընդունի նրա առավելությունն իր հանդեպ: Հակառակի պես, ժյուրիի փոխնախագահն էլ Կատրին Դընյովն էր, իսկ նա երբեք Իզաբելի բարեկամուհին չի եղել, առավել եւս չէր կարող թույլ տալ արտասովոր տաղանդով օժտված իր մրցակցուհու հաղթանակը: Մինչդեռ իտալուհի Վիրնա Լիզին ֆրանսիական կինոյի երկու մեծ տիկնանց համար անվտանգ ախոյան էր, մանավանդ որ ֆիլմում ամեն կերպ ջանացել էր ալացուցիչ Ա-

«Աղաչարանք»

ջանիի սվերում չմնալ:

Ինչեւէ, նախանձախնդիր կանանց այս դավադրությունը, որը Իզաբելին զրկեց լավագույնը կոչվելու իրավունքից, առաջին լուրջ հարվածն էր նրա սրընթաց կարիերային: Ճիշտ է, երեք տարի անց՝ 1997-ին, Կաննի փառատոնը, ասես խավելով մեղքը, Աջանինին ընտրեց ժյուրիի նախագահ, բայց այդ երեք տարում նրա կինոկենսագրությունը հարուցել էր միայն մի դերով:

Ամերիկացի ռեժիսոր Ջերեմիա Չեչիկի «Դիվային գործ» թրիլերում Իզաբելը Շերոն Սթոունի օգնությամբ ամեն գնով փորձում էր ձերբազատվել նողկալի ամուսնուց: Բուլոյի եւ Նարսեժակի նշանավոր դետեկտիվներից մեկի այս էկրանացումը, որ 1955-ին անմոռանալի Սիմոնա Սինյորեի մասնակցությամբ Անրի-Ժորժ Կլուզոյի նկարահանած ֆիլմի հոլիվուդյան տարբերակն է, ֆրանսիական նախօրինակի համեմատ մակերեսային էր ու պարզունակ: Նման ֆիլմը արժանի չէր Աջանինի տաղանդին եւ ակնհայտորեն նրա ամենամեծ ձախողումն էր: «Դիվակին գործից» հետո Իզաբելը դադարեց նկարահանվել:

80-ականներին թափ առած նրա կինոկարիերան անսպասելիորեն ընդհատվեց: Մրցակցուհիները թեւացած ծունչ խաբեցին, հակառակորդներն սկսեցին պնդել, որ Աջանիի աստղը մարել է: Նախանցյալ տարի, հրաժեշտ տալով մեկուսի կյանքին, նա սկսեց հանդես գալ թատրոնում, ինչպես տասնամյակներ առաջ, երբ խաղում էր «Կոմեդի Ֆրանսեզ»-ում: Աջանին արժանացավ նույնիսկ «Մոլիեր» մրցանակի՝ Ֆրանսիայի բարձրագույն թատերական պարգեւին, բայց կինոն նրա կյանքում շարունակում էր մնալ անցյալ:

Եվ ահա, չորսամյա ընդմիջումից հետո, վերջապես, հուրախություն իր երկրպագուների, Իզաբելը վերադարձել է էկրան: «Աղաչարանք» ֆիլմում Լեսիսիա Մասոնը նրան աստղին սազական դեր է պարգեւել՝ բնավ չթաքցնելով իր հիացմունքը Աջանիի հանդեպ: Աննման Իզաբելի երկրպագուները, իրոք, ցնծալու առիթ ունեն. արտաքուստ նա գրեթե չի փոխվել, տարիներն ասես 47-ամյա Իզաբելի կողքով են անցել: Իսկ այս թախծալի մելոդրամի հերոսուհին նույն խմորից է, ինչ Իզաբելի նախկին կերպարներից շատերը: Լեյլա Իմբերը հիշեցնում է ճակատագրական կնոջ, բայց հակառակ այն տարածված պատկերացման, թե նման կնոջ զոհերը տղամարդիկ են, ավելի շուտ, նա հենց ինքն է իր զոհը, ինչպես Կամիլ Կլոդելը, որն իր ժամանակի, խաղադավանի սեփական տաղանդի եւ Օգյուստ Ռոդենի հանդեպ ինքնամոռաց սիրո պատանդն էր դարձել: «Աղաչարանքի» հերոսուհու խաթարված ճակատագիրը հիշեցնում է նաեւ մոտ 20 տարի առաջ Ժան Բեկերի «Սպանիչ ամառ» ֆիլմում Աջանիի խաղացած էլիանին, որը նրան «Սեզար» մրցանակ բերեց: Լեյլա Իմբերն էլ, իշտ էլիանը, աղորում է անցյալի գերության մեջ: Նա փախչում է իր ծագումից, ինքնությունից, թերարժեքության ու մեղքի զգացումից, չսացված կյանքից ու մենությունից:

«Աղաչարանքը» հանդիսախաղ է Իզաբել Աջանիի պատվին, նրա վերադարձին վայել կինոնկար, իսկ այդ վերադարձը ռեժիսոր Լեսիսիա Մասոնի ջանքերի շնորհիվ կարելի է համարել վերջին տարիների ամենահետաքրքիր կինոհրադարձություններից մեկը:

ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐ

ՕՍԿԱՐՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՐ

Ամերիկյան կինոակադեմիան հրապարակել է իր ոսկեզօծ արձանիկների այս տարվա հավակնորդների ցանկը: Տարբեր անվանակարգերով մրցանակների առաջադրված գեղարվեստական ֆիլմերի օսկարյան վարկանիշը այս պատկերն ունի:

«Չիկագո»: 13 անվանակարգ. լավագույն ֆիլմ, ռեժիսորական աշխատանք (Ռոբ Մարշալ), գլխավոր դերակատարուհի (Ռենե Զելվեգեր), երկրորդական դերակատար (Ջոն Ս. Ռայլի), երկրորդական դերակատարուհի (Քերրին Ջիտա-Ջոնս), երկրորդական դերակատարուհի (Քուին Լատիֆա), էկրանավորման սցենար (Բիլ Քոնդոն), օրիգինալ աշխատանք (Դայոն Բիբի), նկարչական ձեւավորում, զգեստներ, երգ («I Move on», Ջոն Քենդեր), մոնտաժ, հնչյունավորում:

«Նյու Յորքի հրոսակախմբերը»: 10 անվանակարգ. լավագույն ֆիլմ, ռեժիսորական աշխատանք (Մարտին Սկորսեզե), գլխավոր դերակատար (Դանիել Դեյ-Լուիս), բնօրինակ սցենար (Ջեյ Քոքս, Սթիվն Զայիլյան, Քենեթ Լոներգան), օրիգինալ աշխատանք (Մայքլ Բալհաուս), նկարչական ձեւավորում, զգեստներ, մոնտաժ, երգ («The Hands That Built America», Բոնո, The Edge, Ադամ Քլեյթոն, Լարի Մալեն), հնչյունավորում:

«Ժամեր»: 9 անվանակարգ. լավագույն ֆիլմ, ռեժիսորական աշխատանք (Սթիվն Դալդրի), գլխավոր դերակատարուհի (Նիկոլ Քիդման), երկրորդական դերակատար (Էդ Հարիս), երկրորդական դերակատարուհի (Ջուլիան Մուր), էկրանավորման սցենար (Դեյվիդ Հեյր), երաժշտություն (Ֆիլիպ Գլաս), զգեստներ, մոնտաժ:

«Դաշնակահարը» (Լեհաստան-Ֆրանսիա): 7 անվանակարգ. լավագույն ֆիլմ, ռեժիսորական աշխատանք (Ռոման Պոլանսկի), գլխավոր դերակատար (Ադրիան Բրոդի), էկրանավորման սցենար (Ռոնալդ Հարվուդ), օրիգինալ աշխատանք (Պավել Էդելման), զգեստներ, մոնտաժ:

«Ֆրիդա»: 6 անվանակարգ. գլխավոր դերակատարուհի (Սալմա Հայեկ), երաժշտություն (Էլիոթ Գոլդենթալ), նկարչական ձեւավորում, զգեստներ, երգ («Burn It Blue», Էլիոթ Գոլդենթալ), գրիմ:

«Մասանիների տիրակալը. երկու ամրոց»: 6 անվանակարգ. լավագույն ֆիլմ (ռեժ.՝ Փիթեր Ջեքսոն), նկարչական ձեւավորում, մոնտաժ, հնչյունավորում, տեսողական էֆեկտներ, հնչյունային էֆեկտների մոնտաժ:

«Նզովյալ ուղի»: 6 անվանակարգ. երկրորդական դերակատար (Փոլ Նյուման), օրիգինալ աշխատանք (Կոնրադ Լ. Հոլ), երաժշտություն (Թոմաս Նյուման), նկարչական ձեւավորում, հնչյունավորում, հնչյունային էֆեկտների մոնտաժ:

«Էկրանացում»: 4 անվանակարգ. գլխավոր դերակատար (Նիքոլաս Քեյջ), երկրորդական դերակատար (Քրիս Քուփեր), երկրորդական դերակատարուհի (Մերիլ Սթրիփ), էկրանավորման սցենար (Չարլի Քաուֆման, Դոնալդ Քաուֆման):

«Դրախտից հեռու»: 4 անվանակարգ. գլխավոր դերակատարուհի (Ջուլիան Մուր), բնօրինակ սցենար (Թոդ Հեյնս), օրիգինալ աշխատանք (Էդուարդ Լամման), երաժշտություն (Էլմեր Բերնսթայն):

«Շվարցի մասին»: 2 անվանակարգ. գլխավոր դերակատար (Ջեք Նիքոլսոն), երկրորդական դերակատարուհի (Քեթի Բեյթս):

«Խոսիր նրա հետ» (Իսպանիա): 2 անվանակարգ. ռեժիսորական աշխատանք (Պեդրո Ալմոդովար), բնօրինակ սցենար (Պ. Ալմոդովար):

«Բոնիր ինձ, եթե կարող ես»: 2 անվանակարգ. երկրորդական դերակատար (Քրիսթոֆեր Ուոքեն), երաժշտություն (Ջոն Ուիլյամս):

«Չիկագո»

«Մարդ մարդը»: 2 անվանակարգ. հնչյունավորում, տեսողական էֆեկտներ:

«Խաղաղ ամերիկացին»: 1 անվանակարգ. գլխավոր դերակատար (Մայքլ Քեյն):

«Անհավասարիմ կինը»: 1 անվանակարգ. գլխավոր դերակատարուհի (Դայան Լեյն):

«Քո մորն էլ...» (Մեքսիկա): 1 անվանակարգ. բնօրինակ սցենար (Ալֆոնսո Կուարոն):

«Իմ մեծ հունական հարսանիքը»: 1 անվանակարգ. բնօրինակ սցենար (Նիա Վարդալոս):

«Իմ տղան»: 1 անվանակարգ. էկրանավորման սցենար (Փիթեր Հեջես, Քրիս Ուայց):

«Հայր Ամարոյի ոճիրը» (Մեքսիկա): 1 անվանակարգ. լավագույն արտասահմանյան ֆիլմ:

«Հերոսը» (Չինաստան): 1 անվանակարգ. լավագույն արտասահմանյան ֆիլմ (ռեժ.՝ Չժան Իմոու):

«Առանց անցյալի մարդը» (Ֆինլանդիա): 1 անվանակարգ. լավագույն արտասահմանյան ֆիլմ (ռեժ.՝ Ակի Կաուրիսմյակի):

«Աֆրիկայում ոչ մի տեղ» (Գերմանիա): 1 անվանակարգ. լավագույն արտասահմանյան ֆիլմ:

«Zus & zo» (Նիդեռլանդներ): 1 անվանակարգ. լավագույն արտասահմանյան ֆիլմ:

«Աստղային պատերազմներ, մաս II. Կլոնների հարձակումը»: 1 անվանակարգ. տեսողական էֆեկտներ:

«Ժամանակի մեքենան»: 1 անվանակարգ. գրիմ:

«8-րդ մղոնը»: 1 անվանակարգ. երգ («Lose Yourself», էմինեմ, Ջեֆ Բես, Լուիս Ռեսոն):

«Թորնբերիների վայրի ընտանիքը»: 1 անվանակարգ. երգ («Father and Daughter», Փոլ Սայմոն):

«Հատուկ կարծիք»: 1 անվանակարգ. հնչյունային էֆեկտների մոնտաժ:

ՀԱՅՈՐԴ ՇԱԲԱԹ՝ ՀԵՌՈՒՍՏԱԷԿՐԱՆՆԵՐԻՆ

Արժե դիտել

8 մարտի, 18.50 Հ1

■ **«Աֆրիկյան թագուհին»★**: Ռեժիսոր՝ Ջոն Հյուսթոն: Դերերում. Համֆրի Բոգարթ, Քեթրին Հեպբըրն: ԱՄՆ, 1951:

Արկածային մելոդրամ, ամերիկյան կինոյի դասական գործերից մեկը, որը Բոգարթին «Օսկար» է բերել:

8 մարտի, 20.55 Կենտրոն, 01.05 Երեւան

■ **«Միրո տրամադրություն»★★★**: Ռեժիսոր՝ Վոնգ Կար-Վայ: Դերերում. Թոնի Լեյուն, Մեգի Չուն: Հոնկոնգ - Ֆրանսիա, 2001:

Չոպարդված զգացմունքների նրբին պատմություն, որ ողողվել է մրցանակներով:

8 մարտի, 00.20 Հ1

■ **«Բազմոց Նյու Յորքում»★**: Ռեժիսոր՝ Շանթալ Ակերման: Դերերում. Ժյուլիետ Բինոշ, Ուիլյամ Հըրթ: Բելգիա - Ֆրանսիա - Մեծ Բրիտանիա, 1996:

Միայնի կատակերգություն, որի հերոսուհին ֆրեյդիստական հոգեվերլուծությունն է:

8 մարտի, 01.10 ԱԼՄ

■ **«Սեր եւ երաժշտություն»★★**: Ռեժիսոր՝ Քեն Ռասել: Դերերում. Ռիչարդ Չեմբերլեն, Գլենդա Ջեքսոն: Մեծ Բրիտանիա,1970:

Գունագեղ ֆանտազիա Չայկովսկու կենսագրության մոտիվներով:

9 մարտի, 23.15 Արմեն-Ակոբ

■ **«Լոլիտա»★★**: Ռեժիսոր՝ Սթենլի Կուբրիկ: Դերերում. Ջեյմս Մեյսոն, Սյու Լայոն, Շելի Ուինթերս: ԱՄՆ, 1962:

Նաբոկովի վեպի կինոտարբերակը ծերացող տղամարդու հանցավոր սիրո մասին, նրա արձակի լավագույն արտացոլումն է էկրանին:

9 մարտի, 23.30 Հ1

■ **«Երազներ»★★★**: Ռեժիսոր՝ Ակիրա Կուրոսավա: Ճապոնիա, 1990:

Ցնորատեսությամբ դրոշմված ութ նովել:

Էջը պատրաստեց
ՀԱՎԱՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

Մարզական

Օուենը կրկնեց Ռաշի ռեկորդը

Կայացան ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/8 եզրափակիչի պատասխան 8 հանդիպումներից 7-ը, որոնք ի հայտ բերեցին քառորդ եզրափակիչի մասնակիցներին: Կրակվում տեղի «Վիսլայի» եւ իտալական «Լացիոյի» հանդիպումը չկայացավ դաշտի անորակության պատճառով: Դեռեւս խաղի նախօրեին «Լացիոն» ՈՒԵՖԱ-ից պահանջել էր խաղը հետաձգել, քանի որ անբարենպաստ եղանակի պատճառով խաղադաշտը սառցակալած էր: Չնայած մարզադաշտի աշխատակիցների ջանքերին, այդպես էլ չհաջողվեց խաղի անցկացման համար նորմալ պայմաններ ապահովել եւ ՈՒԵՖԱ-ի որոշմամբ այդ հանդիպումը կկայանա ավելի ուշ: Հիշեցնենք, որ Հռոմում խաղն ավարտվել էր մարսական ոչ-ոքի (3-3):

1/8 եզրափակիչում բոլորից հաջող հանդես եկան պորտուգալական ակումբները, որոնք մնան հաջորդ փուլ: Եթե «Պորտոն» «Դենիզլիսպորի» հետ պատասխան խաղից առաջ գործնականում նվաճել էր քառորդ եզրափակիչի ուղեգիրը (առաջին խաղում պորտուգալացիները հաղթել էին 6-1 հաշվով), ապա «Բոավիշան» գիջել էր գերմանական «Հերտային» (2-3): Պատասխան խաղում «Բոավիշան» մեծ ջանքերի գնով 85-րդ րոպեին Ֆեռնանդու Ավալուշի խփած միակ գոլի շնորհիվ նվաճեց հաջորդ փուլի ուղեգիրը: Իսկ «Պորտոն» մրցակցի դաշտում խաղն ավարտեց ոչ-ոքի (2-2):

Ֆրանսիական «Օսերի» հետ պատասխան խաղում էլ «Լիվերպուլը» հաղթեց, այս անգամ սեփական հարկի տակ 2 անգամ ավելի շատ գնդակ խփեց (2-0): Առաջին խաղակեսում անգլիացիների խաղը չէր ստացվում, սակայն ընդմիջումից հետո կարողացան 2 անգամ գրավել մրցակցի դարպասը: 67-րդ րոպեին Մերֆու փոխանցումից հետո Մայլ Օուենը խփեց եվրագավաթներում իր 20-րդ գոլը եւ կրկնեց թիմի նախկին հանրահայտ ֆուտբոլիստ Յան Ռաշի ռեկորդը: 5 րոպե անց Մերֆին 2-րդ գնդակը խփեց: «Պանաթինաիկոսին» «Անդերլեխտի» նկատմամբ առաջին խաղում 3-0 հաշվով տարած հաղթանակը բավականացրեց հաջորդ փուլի ուղեգիր նվաճման համար: Բելգիայում դաշտի տերերը 2 գոլ խփեցին:

ԱԵԿ-ի ֆուտբոլիստները, որոնք «Մալագայի» հետ մրցակցի դաշտում ոչ-ոքի էին խաղացել (0-0), սեփական հարկի տակ պարտություն կրեցին 0-1 հաշվով: 28-րդ րոպեին Սանուի խփած միակ գոլը հաղթանակ պարգեւեց իսպանական «Մալագային»: Քառորդ եզրափակիչ մտավ նաեւ շոտլանդական «Սելթիկը», թեեւ հյուրընկալվելիս գիջեց «Շտուտգարտին» (2-3): Առաջին խաղում շոտլանդացիները հաղթել էին 3-1 հաշվով: Թուրքական «Բեշիքթաշն» էլ սեփական հարկի տակ ռեւանշի հասավ չեխական «Սլավիայի» նկատմամբ (4-2) առաջին խաղում 0-1 հաշվով կրած պարտության դիմաց:

Քառորդ եզրափակիչում «Պորտոն» կմրցի «Պանաթինաիկոսի», «Սելթիկը» «Լիվերպուլի», «Մալագան» «Բոավիշայի» հետ: «Բեշիքթաշի» մրցակիցը հայտնի կդառնա «Վիսլա»-«Լացիո» պատասխան հանդիպումից հետո: Խաղերը կկայանան մարտի 13-ին եւ 20-ին:

Մերենա Ուիլյամսը ֆոտոմոդել

Թենիսիստների համաշխարհային դասակարգման առաջատար Սերենա Ուիլյամսը վերջերս հանդես է եկել ֆոտոմոդելի դերում: Sports Illustrated ամսագրում տպագրվել է «Մեծ սաղավարտի» մրցաշարերի հնգակի չեմպիոնուհու լուսանկարը սպիտակ լողազգեստով: Լուսանկարն անտարբեր չի թողել ամսագրի ընթերցողներին, եւ հնարավոր է, որ հաջորդ համարներում լուսանկարների շարքը շարունակվի: Եթե Աննա Կուռնիկովայի նմանատիպ լուսանկարների թիվն արդեն 1000-ից անց է, ապա Սերենան նոր է նշում իր նորամուտը ֆոտոմոդելի դերում: Նշենք, որ այդ ոլորտում թենիսիստուհիներից առաջինը հանրահայտ գերմանուհի Շտեֆի Գրաֆն էր:

Գյունեշը կարող է հեռանալ հավաքականից

Ֆուտբոլի Թուրքիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Շենոլ Գյունեշի եւ երկրի ֆեդերացիայի նախագահ Խալուկ Ուլուսոյի միջեւ կոնֆլիկտը չի հարթվում: Աշխարհի առաջնության բրոնզե մրցանակակրի մարզիչը պահանջում է վճարել խոստացված 372 հազար եվրո պարգեւավճարը, մինչդեռ ֆեդերացիան համաձայն է Գյունեշին վճարել պահանջվող գումարի միայն կեսը: Հարմար առիթից օգտվելով, «Բեշիքթաշի» նախագահ Սերդար Բիլգիլին ֆեդերացիային առաջարկել է հավաքականի դեկը վստահել իր թիմի ռումինացի մարզիչ Միրչա Լուչեսկուին: Վերջինիս գլխավորությամբ «Բեշիքթաշը» վստահորեն գլխավորում է Թուրքիայի առաջնության մրցաշարային աղյուսակը, ինչպես նաեւ հաջող մրցելույթներ է ունենում ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում:

Վրաց առաջին լեգեոներն Արգենտինայում

Դավիթ Ջվարշեյշվիլին դարձավ Արգենտինայում վրաց առաջին լեգեոները: Վրաստանի պատանեկան հավաքականի նախկին դարպասապահը, որ հանդես էր գալիս երկրի առաջնության 3-րդ դիվիզիոնի «Թբիլիսի» թիմում, օրերս ընդգրկվել է արգենտինյան բարձրագույն լիգայի «Չակարիտա Խունիորս» թիմի պատանեկան խմբում: 187 սմ հասակ ունեցող դարպասապահի խաղին հետեւել են «Բոկա Խունիորսի» եւ «Ռիվեր Փլեյթի» ներկայացուցիչները, ինչպես նաեւ հանրահայտ դարպասապահ Ֆիլոլը, որը համակարգում է Արգենտինայի բոլոր հավաքականների դարպասապահների մարզումները Բուենոս Այրեսում գտնվող մարզաբազայում: Այստեղ մի քանի ամիս մարզվում էր վրաց դարպասապահը:

Ջվարշեյշվիլին ֆուտբոլային իր կենսագրությունը սկսել է Թբիլիսիի հանրահայտ թիվ 35 մարզադպրոցում, որտեղ առաջին մարզիչը եղել է Օթարի Շենգելիան: Պատանեկան հավաքական նրան հրավիրել էր «Թբիլիսի» մարզիչ Ռեւազ Գագուան, որը նաեւ մարզում էր հավաքականը:

«Արարատը» փորձարկում է ուժերը

Նոր մրցաշրջանին նախապատրաստվող Երեւանի «Արարատն» այս օրերին Աղլերում ուսումնամարզական հավաք է անցկացնում: Արարատցիներն առաջին ստուգողական հանդիպումն անցկացրին Ղազախստանի առաջին դիվիզիոնի թիմի հետ: Խաղն ավարտվեց ոչ-ոքի (1-1): Շուտով թիմին կմիանան բրազիլացի 3 ֆուտբոլիստներ: Նրանցից մեկը հանդես է գալիս պաշտպանությունում, մյուսը՝ կիսապաշտպանությունում, իսկ 3-րդ լեգեոները հարձակվող է: Արարատցիները մտադիր են 12-օրյա հավաքի ընթացքում մի շարք ստուգողական հանդիպումներ անցկացնել, փորձարկել ֆուտբոլիստներին, որոնցից կազմ ու պատրաստ դիմավորեն առաջնությունն ու գավաթի մրցաշարը:

Արգենտինայի առաջարկը մերժվել է

Ֆուտբոլի Ուկրաինայի հավաքականը հրաժարվել է ապրիլի 1-ին Կիեւում ընկերական հանդիպում անցկացնելու Արգենտինայի ընտրանու առաջարկից: Հավաքականի գլխավոր մարզիչ Լեոնիդ Բուրյակը դա բացատրել է 2 հիմնավոր պատճառով: Նախ, իմաստ չկա մարտի 29-ին իսպանացիների հետ անցկացնելիք ֆուտբոլի եվրոպայի առաջնության ծանր մրցախաղից մի քանի օր անց կրկին խաղադաշտ դուրս գալ ուժեղ հավաքականի հետ մրցելու: Բացի այդ էլ, արգենտինացիներն այդ խաղի անցկացման համար 200 հազար դոլար են պահանջել: Փոխարենն ուկրաինացիներն ապրիլի 1-ին Կիեւում կմրցեն Լատվիայի հավաքականի հետ:

Կասպարովի առաջին հաղթանակը

Մեկօրյա հանգստից հետո Լինարեսի շախմատային մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղատեղանների շուրջ՝ անցկացնելով 5-րդ տուրի հանդիպումները: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Գարրի Կասպարովի հանդիպումը ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի չեմպիոն Ռուսլան Պոնոմարյովի հետ: Ինչպես հայտնի է, այս երկու շախմատիստները հանդիպելու են աշխարհի միացյալ առաջնության կիսաեզրափակիչում: Երկուսն էլ անհաջող են մեկնարկել մրցաշարում եւ այդ առումով հանդիպումը կարեւոր նշանակություն ուներ: Կասպարովը մեկ շնչով անցկացրեց ողջ պարտիան, ստացավ մեծ առավելություն եւ արդեն 45-րդ քայլում Պոնոմարյովը ստիպված էր հանձնվել: Նա կամ պետք է կորցներ նավակը, կամ էլ թույլ տար մրցակցի զինվորին վերափոխվելու թագուհու: Կասպարովն առաջին հաղթանակը տոնեց եւ զգալիորեն բարելավեց մրցաշարային աղյուսակը՝ 4 հնարավորից վաստակելով 2 միավոր: Իսկ միանձնյա առաջատար դարձավ հունգարացի Պետեր Լեկոն, որը հաղթեց իսպանացի Վալյեխոյին: Այդ պարտիայում Լեկոն հաջողության հասավ 43-րդ քայլին: Նախորդ երկու պարտիաներում հունգար գրոսմայստերն ընդհանուր առմամբ 197 քայլ էր կատարել: Լեկոյի օգտին 4 հնարավորից գրանցված է 3 միավոր: Նրան միավորներով կարող էր հավասարվել Անանդը, սակայն 15-ամյա Ռաջաբովի հետ պարտիան ավարտեց ոչ-ոքի: Կատարվեց 25 քայլ, ընդ որում հաղթելու հնարավորություն ուներ Ռաջաբովը, սակայն հնդիկ գրոսմայստերը ծգգրիս քայլերի շնորհիվ ի չիք դարձրեց մրցակցի սպառնալիքը: Անանդը, Կրամնիկն ու Ռաջաբովը վաստակել են 2,5-ական միավոր (առաջին երկուսը՝ 4 հնարավորից): 1,5 միավոր ունի Վալյեխոն, իսկ աղյուսակը եզրափակում է Պոնոմարյովը (1 միավոր 5 հնարավորից):

Մինասյանն առաջատարների խմբում է



Ֆրանսիական Կաթել Լա Գրան քաղաքում անցկացվող շախմատային փառատոնը ռեկորդային թվով մասնակիցներ է հավաքել: Ավանդական՝ 19-րդ բաց առաջնության մրցանակներն են վիճարկում 608 շախմատիստներ: Նրանց թվում են նաեւ մեր հանրապետության չորս ներկայացուցիչները: 9 տուրից բաղկացած շվեյցարական մրցակարգով մրցաշարում արդեն անցկացվել է 7 տուր: Մրցաշարային աղյուսակը 6 միավորով միանձնյա գլխավորում է լեհ շախմատիստ Ալեքսանդր Միսսան: 18 շախմատիստ, որոնց թվում է նաեւ Արտաշես Մինասյանը, իր օգտին գրանցել է 5,5-ական միավոր: Մինասյանն մրցաշարը սկսեց պարտությամբ, այնուհետեւ 3 անընդմեջ հաղթանակներից հետո պարտիան ավարտեց ոչ-ոքի, իսկ վերջին երկու տուրերում կրկին հաղթեց: Հայ շախմատիստներից 2-րդ ցուցանիշն ունի Տիգրան Նալբանդյանը՝ 5 միավոր (+4=2-1): Տիգրան Քարամյանի օգտին գրանցված է 4,5 միավոր (+2=5-0), իսկ Էլինա Դանիելյանը վաստակել է 4 միավոր: Էլինան տոնել էր 2 հաղթանակ, 4 պարտիա ավարտել ոչ-ոքի, սակայն 7-րդ տուրում կրեց առաջին պարտությունը:

Ռուսները թողեցին ասպարեզը

Դուբայում անցկացվող թենիսի խոշոր մրցաշարում, որի մրցանակային հիմնադրամը 1 մլն դոլար է, անհաջողության մատնվեցին Ռուսաստանի բոլոր 4 ներկայացուցիչները՝ չկարողանալով հաղթահարել 2-րդ փուլի արգելքը: Առաջինը մրցասպարեզը թողեց Միխայիլ Յուժնին, որը միայն առաջին խաղափուլում կարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ Սյենգ Շալկենին: Իր իրական հնարավորությունները չկարողացավ դրսեւորել նաեւ Մարատ Սաֆինը: Առաջին փուլում հիանալի ոճով հաղթելով 27-ամյա Ալեքսանդր Վասկեին, հաջորդ մրցակցին՝ Թոմի Ռոբրեդոյին ռուս թենիսիստը պարտվեց: Անդրեյ Ստոլյարովը գիջեց Իրժի Նովակին: Վերջին մասնակիցը՝ եվգենի Կաֆելնիկովն էլ չարդարացրեց սպասելիքները: Հիշամ Արազու հետ մրցավեճում նա մի շարք սխալներ թույլ տվեց եւ ստիպված էր կորցը թողնել պարտված:

Մեքսիկայում ընթացող մրցաշարում 3-րդ փուլի արգելքը հաղթահարեց Կուեռտենը՝ հաղթելով Գոնսալեսին: Սաբալեսան պարտության մատնեց Միրանդային (7-5, 6-3), Կալյերին պայքարից դուրս մղեց Ռիոսին (6-3, 7-5): Ֆելիքս Մանտիլյան ավելի ուժեղ գտնվեց Կառլոս Մոյայի հետ մրցավեճում (6-4, 7-6):

Հաջողությունն ուղեկցեց բանակայիններին

Բասկետբոլի եվրալիգայի 2-րդ փուլի առաջին տուրում «D» խմբում հանդես եկող Մոսկվայի ԲԿՄԱ-ն հյուրընկալվելիս Մալագայում ջախջախիչ պարտության մատնեց իսպանական «Ունիկախա» թիմին (95-76): Խաղը բավական արդյունավետ ստացվեց, թեեւ երկու թիմերն էլ աչի են ընկնում ուժեղ պաշտպանությամբ: Խաղասկզբում հյուրերը 7 միավորի առավելություն ստացան, սակայն իսպանացիները 3 միավորանոց դիպուկ նետումներով առաջին խաղափուլն ավարտեցին իրենց օգտին (25-23): Հաջորդ երկու խաղափուլերում ԲԿՄԱ-ն արդեն հաշվի մեջ զգալի առաջ անցավ եւ հաղթանակը ձեռքից բաց չթողեց: Բանակայինների կազմում բոլորից արդյունավետը Ջոն Ռոբերտ Խոլդենն ու Վիկտոր Ալեքսանդերն էին, որոնք վաստակեցին 22-ական միավոր: Այդ հաղթանակի շնորհիվ ԲԿՄԱ-ն գլխավորեց «D» խմբի աղյուսակը: Մյուս խաղում Թուրքիայի «էֆես Պիլսենը» 68-62 հաշվով պարտության մատնեց խորվաթական «Ցիբոնային»: Մարտի 5-ին ԲԿՄԱ-ն սեփական հարկի տակ կհյուրընկալի «Ցիբոնային»:

Հունական «Պանաթինաիկոսը» սեփական հարկի տակ հաղթեց «Թիմսիստեմին»՝ 81-67: «Բենետոնը» «Տաուգրեսին» պարտության մատնեց 81-68 հաշվով: Մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. «Օլիմպիա»-«Օլիմպիակոս»՝ 72-74, «Բարսելոն»-«Վիլերբան»՝ 85-77, «Վիրտուս»-«Մաֆիաբի»՝ 73-83, «Սիենա»-«Ուլկեր»՝ 84-79:

ԲԿՄԱ-ի հաղթարշավը կանգնեցվեց

Ֆուտբոլի Բուլղարիայի առաջնությունում Սոֆիայի ԲԿՄԱ-ն ընդհատեց հաղթական խաղերի շարքը: Մինչ այդ 13 անընդմեջ հաղթանակ տոնած բանակային ֆուտբոլիստները 14-րդ տուրում ոչ-ոքի (1-1) խաղացին Վառնայի «Սպարտակի» հետ: ԲԿՄԱ-ն 40 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: 2-րդ տեղում «Լեւսկու» ֆուտբոլիստներն են, որոնք վաստակել են 34 միավոր: Ռմբարկուների ցուցակը գլխավորում է «Սլավիայի» ֆուտբոլիստ Կուբեը, որը խփել է 17 գնդակ: 1 գոլ պակաս է խփել «Լեւսկու» հարձակվող Չիլիկովը:

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅԽՆԱՅԲԱՆԿԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՅՆ ՏԵՍԱԿԱՆԻ, ԱՅՆ ԹՎՈՒՄ.

- բանկային հաշիվների բացում եւ սպասարկում,
- հաճախորդների համար առավել շահավետ պայմաններով ժամկետային ավանդների ընդունում,
- սպառողական եւ առեւտրային վարկերի տրամադրում, այդ թվում ԱՄՆ Գյուղատնտեսության Մարեսինգի աջակցության ծրագրի շրջանակներում վարկերի տրամադրում
- բոլոր տեսակի բանկերի լայն ցանցի միջոցով դրամական փոխանցումների իրականացում աշխարհի ցանկացած երկիր,
- Western Union եւ «Անելիֆ» համակարգերով առանց հաշիվ բացելու դրամական փոխանցումների իրականացում,
- ճանապարհային չեկերի վաճառք եւ սպասարկում, աշխարհի բոլոր բանկերի կողմից ընդունվող բանկային չեկերի տրամադրում,
- հաճախորդի հանձնարարությամբ առաջնային եւ երկրորդային շուկաներում պետական արժեթղթերի հետ գործառնությունների իրականացում,
- կոմունալ բոլոր վճարումների ընդունում, այդ թվում հեղհեղական եւ շարժական (բջջային) հեռախոսակապի ծառայությունների վճարների ընդունում,
- հարկային վճարումների, նոտարական ծառայությունների դիմաց պետական տուրքերի, Պետավտոտեսչության ծառայությունների դիմաց վճարումների ընդունում:

Հայխնայբանկը իրավաբանական եւ ֆիզիկական անձանց տրամադրում է բանկի հասուկ կահավորված եւ անվտանգության միջոցներով հագեցված տարածում անհատական բանկային պահարաններ՝ փաստաթղթերի եւ արժեքների պահպանման համար:

Ծառայությունները բանկի կողմից տրամադրվում են ինչպես Գլխամասային գրասենյակի, այնպես էլ ամբողջ հանրապետության տարածքում, այդ թվում՝ հեռավոր տարածաշրջաններում գործող մասնաճյուղերի միջոցով: Բանկի մասնաճյուղերի հաճախորդներին սպասարկում են

- երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ 9:00-ից մինչեւ 17:00
- շաբաթ օրերին՝ 10:00-ից մինչեւ 16:00

Հայխնայբանկում գործում է Դիլինգային կենտրոն, որտեղ հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում երկուշաբթիից ուրբաթ օրերին վարձակալել օրը 24 ժամ գործող, միջազգային տեխնիկական եւ տեխնոլոգիական չափանիշներին համապատասխանող տերմինալ: Դիլինգային կենտրոնին կից գործում է Ուսումնական կենտրոնը, որտեղ ցանկացողները հնարավորություն կունենան մասնակցելու ՖՈՐԵՔՍ շուկայում առեւտրի հիմունքներին վերաբերող ուսումնական դասընթացների:

Բանկի ծառայությունների մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ Հայխնայբանկի Գլխամասային գրասենյակում, հետեւյալ հասցեով՝

ք.Երեւան, Նալբանդյան փ., 46, հեռ.: 56.07.25, 56.07.63, 54.18.03,

ինչպես նաեւ Երեւանում եւ հանրապետության տարածաշրջաններում գործող մասնաճյուղերից:

2002թ.-ի նոյեմբերից իր գործունեությունն է սկսել նաեւ Հայխնայբանկի Ստեփանակերտի մասնաճյուղը (Վազգեն Սարգսյանի փ., 21), որտեղ հաճախորդներին նույնպես առաջարկվում են ժամանակակից բոլոր բանկային ծառայությունները:

Հրավիրում ենք Ձեզ այցելելու Ինտերնետ ցանցում մեր պաշտոնական www.asb.am էջը:

Հայխնայբանկը հրավիրում է մասնավոր անձանց օգտվելու խնայողությունների ներգրավման բնագավառում առաջարկվող իր ծառայություններից

Հայխնայբանկն ընդունում է ցպահանջ եւ ժամկետային ավանդներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, ՌԴ ռուբլով եւ Եվրոյով: Ավանդները ընդունվում են ժամկետի վերջում, ինչպես նաեւ յուրաքանչյուր ամիս վճարելու պայմանով:

Մասնավոր անձանց խնայողությունների ասիճանական կուտակման նպատակով Հայխնայբանկն ընդունում է հատուկ «Կուտակման» ավանդ: Ավանդի այս տեսակը հնարավորություն է տալիս բացել ավանդային հաշիվը սկզբնական մուծման նվազագույն գումարի չափով, այնուհետեւ որոշակի ժամանակահատվածի ընթացքում (180 օր, 270 օր, 365 օր) պարբերաբար կատարել խնայողությունների կուտակում՝ լրացուցիչ մուծումների ձեւով: Ավանդն ընդունվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով եւ Եվրոյով:

Ֆիզիկական անձանց ավանդները Հայխնայբանկում ընդունվում են հետեւյալ պայմաններով.

ԱՎԱՆԴԻ ՏԵՍԱԿԸ	ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ	ՍՈՒՄՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ
ՀՀ դրամով		
Ցպահանջ	2	
Կենսաթոշակային	2	
30 օր ժամկետով	10	50 000
90 օր ժամկետով	12	50 000
180 օր ժամկետով	14	50 000
180 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	13.6	250 000
270 օր ժամկետով	12	50 000
270 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	11.4	250 000
365 օր ժամկետով	12	50 000
365 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	11.4	250 000
«Կուտակման-1» /365 օր/	9	10 000
«Կուտակման-2» /270 օր/	12	10 000
«Կուտակման-3» /180 օր/	10	10 000
ԱՄՆ դոլարով		
Ցպահանջ	2	
30 օր ժամկետով	7.2	$100
90 օր ժամկետով	9	$100
180 օր ժամկետով	10	$100
180 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	9.6	$500
270 օր ժամկետով	8	$100
270 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	7.4	$500
365 օր ժամկետով	7.2	$100
365 օր՝ եկամուտների ամենամսյա վճարման իրավունքով	6.6	$500
«Կուտակման-1» /365 օր/	6	$100
«Կուտակման-2» /270 օր/	8	$100
«Կուտակման-3» /180 օր/	7	$100
Եվրոյով		
«Կուտակման-1» /365 օր/	6	500
«Կուտակման-2» /270 օր/	8	500
«Կուտակման-3» /180 օր/	7	500
ՌԴ ռուբլով		
Ցպահանջ	2	
90 օր ժամկետով	10	RUR 3000

Advanced ENGINEERING

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող էներգաարդյունավետության, սպառման ոլորտի կառավարման եւ վերականգնվող էներգիայի ռեսուրսների զարգացման ծրագիրը հայտարարում է մրցույթ հեռուստատեսային սոցիալական գովազդի պատրաստման վերաբերյալ: Գովազդի թեման է՝ էներգախնայողության եւ էներգաարդյունավետության խնդիրները Հայաստանում:

Բոլոր հետաքրքրված գովազդային գործակալությունները կարող են դիմել կազմակերպության գրասենյակ՝ Երեւան, Սարյան 26 հասցեով, տեղեկացվելու աշխատանքային պայմանների մասին եւ ստանալու առաջարկի ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Փաստաթղթերը կարելի է ստանալ նաեւ մեր ինտերնետային էջից՝ http://www.erep.am/downloadable documents.htm հասցեով:

Տեղեկությունների համար զանգահարել 541815, 541814 կամ (09) 480902 հեռախոսահամարներով: Առաջարկների ընդունման վերջին ժամկետն է 2003 թ. մարտի 14-ը:

Պայմանագրի համարը՝ CIF4/Cond Ref/003
Վարկի համարը՝ No 3095 AM
Հրավեր հայտարարելու օրը՝ 2003 թ.-ի մարտի 1-ը

Պարոնայք,

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը Համաշխարհային բանկից/Միջազգային զարգացման ընկերակցությունից (IDA) նպատակաուղղված վարկ է ստացել Համայնքային զարգացման ծրագրի համար եւ մտադրվում է օգտագործել միջոցների մի մասը, ըստ պայմանագրի նախընտրելի վճարումներ կատարելու համար, որի իրականացման համար հայտարարվում է հրավեր:

2. Երեւանի «Զրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերության օտերատոր «Էյ. Յութիլիթիզ» (գործատու) սույնով հրավիրում է ձեզ՝ գնային առաջարկ ներկայացնել «Նոր-Նորք համայնքում գտնվող համաշխարհային գրասենյակների վերանորոգման» աշխատանքների իրականացման համար: Փաստաթղթերը կարելի է ձեռք բերել «Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» ՊՀ-ից՝ ՀՀ, Երեւան 375025, Աբովյան 62ա Արտաքին փաթեթի համար պետք է վճարել 5000 (հինգ հազար) դրամ անփոխհատուցելի գումար: Վճարման ձեւն է անանձնական դեպոզիտ HSBC բանկի No. 001-155563-001 հ/հ (Հայաստան, Երեւան) փոխանցում նույն հ/հ-ին:

«Համաշխարհային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» ՊՀ՝ ՀՀ, Երեւան 375025, Աբովյան 62ա:
Հեռ.՝ 56-95-20, ֆաքս. 56-93-54 «Էյ. Յութիլիթիզ» անունով:

3. Շինարարական աշխատանքների տեւողությունը կազմում է 2 ամիս:

4. Ձեր գնային առաջարկի պատրաստման համար կից կցամադրվի անհրաժեշտ գծագրեր, մասնագրեր եւ աշխատանքների ծավալները ու ներկայացվող գնային առաջարկի ձեւի նմուշ, ինչպես նաեւ «Հայտատուների ցուցումներ» եւ «Պայմանագրի պայմաններ»: Ձեր գնային առաջարկը կից ներկայացված ֆորմատով պետք է ծրարում կնքվի, հասցեագրվի եւ առավելագույն հասցեով:

Գնային առաջարկը պետք է ուղեկցվի հայտագրի 2 տոկոսի չափով հայտային երաշխիքով:

«Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» ՊՀ՝ ՀՀ, Երեւան 375025, Աբովյան 62 ա, հեռ.՝ 56-95-20, ֆաքս. 56-93-54:

5. Մրցույթի մասնակիցները պետք է ունենան համապատասխան աշխատանքներն իրականացնելու արտոնագիր, վերջին երեք տարիների ընթացքում կատարված աշխատանքների ծավալը պետք է լինի ոչ պակաս, քան 10 մլն ՀՀ դրամ:

6. Ձեր գնային առաջարկն ուժի մեջ կլինի 30 (երեսուն) օրվա ընթացքում՝ սկսած 2003 թ.-ի մարտի 28-ից: Հայտային երաշխիքի վավերականության համարվելու ժամկետն է 2003 թ.-ի մայիսի 28-ը:

7. Կապալառուն, որը հետ է վերցնում իր գնային առաջարկը գործող ժամկետի ընթացքում, կամ հրաժարվում է ընդունել պայմանագրի շնորհումը, շնորհվելու դեպքում կհանվի երկու տարի ժամկետով ծրագրի կապալառուների ցուցակից, իսկ հայտային երաշխիքը կառգրավվի:

8. Ձեր գնային առաջարկը պետք է ներկայացվի մինչեւ 2003 թ.-ի մարտի 28-ը, ժամը 17.00: Գնային առաջարկները կբացվեն հրապարակավ՝ կապալառուների ներկայացուցիչների ներկայությամբ, որոնք ցանկություն կհայտնեն ներկա լինել **2003 թ.-ի մարտի 28-ին, ժամը 17.00-ին, անմիջապես մրցառի ներկայացման վերջնաժամկետից հետո, հետեւյալ հասցեով՝**

«Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ» ՊՀ՝
ՀՀ, Երեւան 375025, Աբովյան 62ա:

9. Գումարը պետք է հաշվարկված լինի այն ընթացմամբ, որ պայմանագրի ընդհանուր գումարի 80 տոկոսը ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի վարկային միջոցներից, որի նկատմամբ կիրառվում են հարկային արտոնություններ: Իսկ պայմանագրի գումարի 20 տոկոսը հանդիսանում է ՀՀ կառավարության համաֆինանսավորում, որը ենթակա է հարկման:

Ս.Թ. մարտի 6-13

Պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոնում /նախկին հանրապետական ծննդատանը/ աշխատելու են ֆրանսիացի մասնագետներ՝ կատարելով բոլոր տեսակի լապարոսկոպիկ վիրահատություններ, մասնավորապես կանանց անպտղության դեպքում:

Նախապես դիմել՝
Երեւան, Աջափնյակ, Մարգարյան 6
Հանրապետական ծննդատուն
հեռ. 34 18 83

ATTENTION ALL CANADIAN CITIZENS

The Canadian Vice-Consul to the republic of Armenia will be in the lobby of the Hotel Yerevan on Thursday 6th (from 10 to 12 AM) and Friday March 7th (from 2 to 4PM) to meet and register Canadian citizens staying in Armenia. Canadian citizens are encouraged to register their presence with the Canadian Honorary Consul in Yerevan. Once registered, the Canadian Consulate will be able to provide advice and assistance in times of need or emergency. Your contact information will be used to provide you with warnings and information regarding safety and security only and will be held in strictest confidence. Please contact the Consulate with questions at 40-12-38.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայկական միջազգային ավիաուղիներ» ընկերությունն աշխատանքի է հրավիրում անգլերենի իմացությամբ եւ համակարգչին տիրապետող փորձառու իրավաբանի:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել աշխատանքային օրերին 28 77 15 (իրավաբանական բաժին):

ՍԵՓԱՆ 529353
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վաճառվում է Ryobi հեռուստացույց 51 սմ տրամագծով, էկրանը TOSHIBA մակնիշի, տեխ. մասերը արտասահմանյան: Գինը 65 դոլար: GOLDSTAR տեսամագնիտոֆոն, օգտագործված: Գինը 75 դոլար:Հեռ.՝ (09)423833
- Վաճառվում է մեքենայի հեղուկ գազի սարքավորում՝ իր բոլոր պարագաներով: Գինը 80 դոլար: Հեռ.՝ 531439 (Արմեն):
- Վաճառվում է BMW մեքենայի ավտոպահեստամասեր, էժան: Նաեւ նոր «Վոլգա» կարի մեքենա: Հեռ.՝ 533607:
- Վաճառվում է 1989 թ. արտադրության AUDI 80 կուպե սպորտային, գույնը սպիտակ, շարժիչը 6 մխոցային, ունի բարձրակարգ ստերեո համակարգ: Գինը՝ 3900 դոլար: Հեռ.՝ (09) 431079:
- Տրվում է վարձով 2 սենյ. բն. կենտրոնում (5/2) բոլոր հարմարություններով: Գինը՝ 200 դոլար: Հեռ.՝ 538341:
- Կատարում եմ համակարգչային ծառայություն (տեքստերի հավաքում ռուսերեն, հայերեն եւ անգլերեն), նաեւ արտատպում: 1 համակարգչային էջը՝ 150 դրամ: Հեռ.՝ 26-48-40:
- Գտել է տղամարդու սեւ գույնի սպորտային պայուսակ Կորյունի փ. 7 շենքի առջեւի ավտոկանգառի տարածքում: Պայուսակի մեջ եղել է ականջի լսողական սարք, փաստաթղթեր, օպտիկական ակնոց, լուսանկարներ: Գտնողը կստանա դրամական պարգեւ: Հեռ.՝ 54-39-85, (09) 49-98-47, Անահիտ:
- Կազմակերպում եմ մանկական շոուներ, ծննդյան տոներ եւ այլ միջոցառումներ: Հեռ.՝ 231170, Գրիգոր:
- Վաճառվում են շահույթային երկու խոշոր բարձր որակի արարատներ, աշխատում է գազով, պատրաստված են ռուսական թիթեղից: Վաճառվում է նաեւ Ձորչը բարձր սեղան: Հեռ.՝ 24-73-42:
- Կգնեմ նոր մոդելի բջջային հեռախոսներ: Հեռ.՝ 09 46 93 72, Հրանտ:

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 28. 2. 2003 Գինը՝ 100 դրամ